

ՀԱԿՈՔ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ

# ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐ

Երևան 2004թ.

Նրանք հասան անմիտների երկիրը,  
որոնք ամեն ինչ վաճառել էին:  
*Հայկական ժողովրդական հեքիաթից*

**Մի՛ ՁեՎԱՑՐԵՔ, ԹԵ ՉԳԻՏԵՔ, ՈՐ ՈՏՔԻ ՏԱԿ ՏՐՈՐՈՒՄ ԵՔ ՕՐԵՆՔԸ  
ՕՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ**

Շինարարության տակ է դրվում՝ հազարամյակների պատմություն, ավանդական երկրագործական, բնապահպանական և, ընդհանրապես, բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեցող անգնահատելի մի համալիր՝ Դալմայի այգիները: Ազգային մեծ արժեք հանդիսացող այդ այգիները կառուցապատման տակ դնելու եռանդուն գործունեությունը 1999 թվականից իր վրա է վերցրել Երևանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը, որը միմյանց հաջորդող քաղաքապետների և առավել բարձր պաշտոն զբաղեցնողների հովանավորչությամբ ի վերջո հասավ իր բաղձանքին՝ 2004թ. մարտի 29-ին ՀՀ նախագահը վավերացրեց Դալմայի այգիների ոչնչացման՝ կառավարության թիվ 1941-Ա որոշումը: Գիշտ է, այդ որոշումն «անհատական» է, հետևաբար և նորմատիվ իրավական փաստաթղթի ուժ չունի, այդուհանդերձ, Երևանի քաղաքապետն արդեն աճուրդի է հանել այգու որոշ հողամասեր՝ այդ մասին անգամ տեղյակ չլսած Վերականգնման Ժամանակին Երևանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը և գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը կամայականորեն չեղյալ համարեցին այգու պահպանությունն ապահովող կարևոր կռիվներից մեկը՝ հուշարձանի կարգավիճակը: Այդ նույն պաշտոնյաների նախաձեռնությամբ ՀՀ կառավարությունը Երևանի քաղաքապետարանին արտոնություն տվեց՝ քաղաքաշինական որոշ ծրագրեր իրականացնել առանց քաղաքաշինության նախարարության և այլ գերատեսչությունների համաձայնության: Նույնիսկ հուշարձանի կարգավիճակն ապօրինաբար չեղյալ համարելուց հետո կան բոլոր իրավական հիմքերը, որպեսզի այդ հողատարածքը պահպանվի և շարունակաբար օգտագործվի իր բուն նպատակով՝ խաղողի, բազմապիսի պտուղների, բանջարաբոստանային կուլտուրաների աճեցմամբ և բնապահպանական նշանակությամբ: Դալմայի այգիների ոչնչացմանը հասնելու ուղիներից մեկն էլ այգուն ոռոգման ջրի մատակարարման խոչընդոտումն է, ինչպես և առանձին հատվածներ միտումնավոր դարձվում են աղբավայր: ՀՀ կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը Դալմայի այգիներին վերաբերող իրենց որոշումներում հիմնականում անտեսում են օրենքի պահանջները, այդ թվում՝ մարդու իրավունքները: Թողտվությունը հասել է այն աստիճանի, որ քաղաքապետարանը առանձին հողատարածքների զավթելու համար ներգրավում է նաև ոստիկանությանը:

Հաշվի առնելով Դալմայի այգիների բազմաշերտ ու բազմապիսի նշանակությունը 1991թ. կասեցվեց այդ տարածքի սեփականաշնորհումը: ՀՀ նախարարների խորհրդի 1991թ. հունիսի 13-ի N 397 «Երևան քաղաքի Շահունյանի շրջանի գյուղատնտեսության վարչության ենթակա տնտեսությունների կարգավիճակի մասին» որոշմամբ Դալմայի այգիների «գյուղատնտեսական հողատեսքերը և արտադրության մյուս միջոցները առաջին հերթին վարձակալության են տրվում առկա կոլտնտեսությունների բոլոր անդամներին, երկրորդ հերթին՝ պետական հիմնարկ-ձեռնարկություններին, կոոպերատիվներին, այլ կազմակերպությունների և առանձին անհատների»: Իսկ ՀՀ կառավարության 1994թ. մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության պետական պահուստային ֆոնդի հողերի վարձակալության մասին» N108 որոշմամբ վարձակալության պայմանագրերի կնքումը դրվում է շրջգործկոմների վրա. «... 7. Սահմանել, որ վարձակալության տրվող հողերի մշակության պարտադիր կատարման ենթակա ագրոտեխնիկական պահանջների վերահսկողությունը, ինչպես նաև

վարձակալության պայմանագրերի գրանցման, հաշվառման և ամփոփման աշխատանքներն իրականացվում են պատգամավորների շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեների գյուղատնտեսության վարչությունների կողմից»: Այդ հարցին վերաբերող ՀՀ կառավարության որոշումներից են նաև N250, 1991թ.; N283, 1991թ.: Դրանցից ելնելով, Շահումյանի շրջխորհրդի գործկոմը, իր հերթին համապատասխան որոշումներ կայացնելով, Դալմայի այգիների հողատարածքը այգեգործական և բանջարաբուստանային կուլտուրաների մշակման նպատակով, վարձակալական հիմունքներով, հանձնում է քաղաքացիներին:

Ներկայումս այդ տարածքը զբաղեցված է խաղողի այգիների, պտղատու ծառերի և մշակաբույսերի դաշտերով: Այդտեղ պահպանվել են ծառերի և թփերի արժեքավոր տեսակներ: Հողատարածքն աչքի է ընկնում հազվադեպ պատահող բարձր բերրիությամբ: Այն իր գեղագիտական, լանդշաֆտային և միկրոկլիմայական հատկանիշներով ստեղծում է յուրահատուկ մի համալիր:

Մասնագետները գտնում են, որ Դալմայի այգիների հիմնումը պատահական չի եղել: Այստեղ հողերը հիմնականում հարավային և հարավ-արևմտյան դիրքադրություն ունեն, ուստի և ջերմության ու լուսավորության պայմանները նպաստավոր են բարձրորակ խաղող, մրգեր և գյուղատնտեսական այլ մթերք աճեցնելու համար: Բազմադարյան մշակության արդյունքում այստեղ ընտրվել ու զարգացվել են խաղողի և պտղատու բազմաթիվ տեղական տորտեր: Անցյալ դարում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են մոտ 3000 տարվա վաղեմության 800-1000 լիտր տարողությամբ 400 կարաս: Խաղողի և պտղատու ծառերի պահպանված կորիզներով-սերմերով հաստատվել է, որ դրանք դեռևս աճում են Դալմայի այգիներում:

Դալմայի այգիները ծածկված են եղել ոռոգման խիտ ցանցով, որը բարեբախտաբար գործում է առ այսօր: Մոտ 3000 տարի առաջ կառուցված **Դալմայի ջրանցքը** մինչև օրս չի կորցրել իր նշանակությունը: Այդ ջրանցքի երկարությունը մոտ 6,5 կմ է և ներառում է 450 և 51 մ երկարության երկու ժայռափոր թունել:

Դալմայի այգիների տարածքում պահպանվել են նաև մոտ 500 տարեկան վեց կաղնի, որոնց մոտակայքում եղած քարանձավը, ըստ պատմաառասպելական տեղեկության՝ Անահիտ աստվածուհու դիցարանն է և արհավիրքների ժամանակ Դալմայի այգիները նա է խնամել:

Հայաստանում խաղողագործության և գինեգործության բնագավառների գիտական ժամանակակից ուսումնասիրությունների համար հիմք են ծառայել Դալմայի այգիները:

Այժմ Դալմայի այգիներում երկրագործությամբ են զբաղվում 1800 վարձակալ: Մեր տրամադրության տակ եղած 1541 անուն ցանկում վարձակալական պայմանագրերի ժամկետներն ավարտվում են 2004-2028 թվականներին:

### *ԱՅԳՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Դալմայի այգիները ստեղծվել են մեր նախնիների քրտնաջան ու հետևողական աշխատանքի շնորհիվ, որոնք դեռևս 3000 տարի առաջ տարածքը դարձրել են կուլտուր-ոռոգելի հողեր և դրանք նախնական վիճակի համեմատությամբ ձեռք են բերել որակական նոր հատկանիշներ: Փաստորեն, այդ տարածքը մարդու ձեռքով դարձել է երկրագործության ոսկե ֆոնդ հանդիսացող բնության վերափոխման անգնահատելի մի հուշարձան. հրաշալի մի օրինակ այն բանի, թե ինչպես կիսաանապատային դժերը համառ աշխատանքի շնորհիվ կարելի է դարձնել բերրի հողատարածք, ծաղկուն այգի: Հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ տարածքը այդպիսին է եղել ավելի քան երեք հազար տարի առաջ և այն շարունակաբար ծառայել է իր բուն նպատակին մինչև մեր օրերը:

1985 թվից տարածքը մտցված է ՀՀ ԳԱ կազմած բնության հուշարձանների ցանկում, իսկ ՀՀ մշակույթի նախարարության ցուցակներում այն արձանագրված է

որպես միջնադարյան հուշարձան: Դալմայի այգիների տարածքը տեղ է գտել նաև ցարական Ռուսաստանի 19-րդ դարի հատուկ նշանակության օբյեկտների շարքում:

Չնայած այն բանին, որ Դալմայի այգիները միշտ էլ բարձր կարգավիճակ են ունեցել, այդուհանդերձ, տարբեր ունեցություններից գերծ պահելու մտահոգությամբ Հայաստանի կանաչների միությունը (ՀԿՄ) դիմել է ՀՀ իշխանություններին՝ այգու կարգավիճակը առավել բարձրացնելու ակնկալիքով. հասկանալի է՝ չփոխելով այգու օգտագործումը երկրագործական նպատակով:

Արձագանքելով Հայաստանի կանաչների միության հարցմանը, ՀՀ Մշակույթի փոխնախարար Կ. Ղաֆադարյանի ստորագրությամբ փաստաթղթում (12.11.1996թ., N 02-22/497) ասվում է. «*Ի պատասխան Ձեր 1996թ. նոյեմբերի 11-ի հ. 4-91 գրության, Երևանի Սարդարի այգիների կարգավիճակի վերաբերյալ հայտնում ենք, որ այն ՀՀ Հուշարձանների ցուցակներում արձանագրված է որպես տեղական նշանակության, ուշ միջնադարի հուշարձան: Նույն կարգավիճակն ունեն նաև Դալմայի այգիները*»:

Նման հարցման առումով ՀՀ բնապահպանության փոխնախարար Ս. Բալոյանը գրում է (05.11.1996թ., N 1-14/102). «*Ի պատասխան Ձեր 27/10-96թ. 4-87 գրությանը հայտնվում է, որ համաձայն ՀՀ ԳԱԱ կատարված ուսումնասիրությունների «Սարդարի այգիներ» տարածքը համարվում է բնական և մշակութային հուշարձան և 1985թ. այդ տարածքը (օբյեկտը) մտցված է նրանց կողմից կազմված ՀՀ բնության հուշարձանների նախնական ցուցակում*»:

Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել նաև ՀՀ Հուշարձանների պահպանության վարչության պետ Կ. Ղաֆադարյանի գրությունը (03.07.1998 , N 02/1132)՝ ուղղված Հայաստանի կանաչների միությանը. «*Ինչպես Ձեզ հայտնի է «Սարդարի այգիներ» կոչվող տարածքին Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի հաստատման մասին Երթադիտորիդի գործկոմի 1991թ. ապրիլի 18-ի համար 6/18 որոշմամբ տրված է տեղական նշանակության հուշարձանի կարգավիճակ: Ըստ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և օգտագործման մասին օրենքի, այգու տարածքում արգելվում է հողային, շինարարական և այլ աշխատանքների կատարումը, ինչպես նաև տնտեսական գործունեությունը՝ առանց ՀՀ հուշարձանների պահպանության պետական մարմնի թույլտվության: Ձեր գրության մեջ նշված՝ քաղաքապետարանի կողմից այգու տարածքի վրա կատարված հողահատկացումներից և ոչ մեկը չի համաձայնեցված նախարարության հուշարձանների պահպանության վարչության հետ, որը օրենքի խախտում է: Այգու ներկայիս կարգավիճակը, օրինապահության դեպքում, միանգամայն բավարար է նրա պատշաճ պահպանության համար: Միաժամանակ հայտնում են, որ նախարարությունը չի առարկում այգուն հատուկ կարգավիճակ տալու Ձեր առաջարկին*»:

Դալմայի այգիների պահպանության և դրան հատուկ կարգավիճակ տալու առաջարկությամբ ՀԿՄ-ն դիմել է նաև այդ ժամանակներում արագորեն մինյանց հաջորդող վարչապետներին: Ճիշտ է, նրանք բոլորն էլ ընդառաջել են, սակայն ինչ-ինչ պատճառներով հարցը վերջնական լուծում չի ստացել:

Ենթադրվում էր, որ դիմումներից մեկն արդեն իր տրամաբանական ավարտին է մոտենում: Այսպես, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Կ. Արեյանը ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանին հղած փաստաթղթում (02. 03.1998թ., N 01/18-496h) գրում է. «*Երևան քաղաքի «Սարդարի այգիներ» կոչված տարածքի պահպանման մտահոգությամբ՝ Հայաստանի Կանաչների Միության Ձեզ հասցեագրված դիմումը, համապատասխան նախարարությունների ներկայացուցիչների հետ համատեղ քննարկելով, հայտնում ենք, որ նշված տարածքը գտնվում է Կենտրոն համայնքի սահմաններում և ըստ Երևանի Կենտրոնի մանրամասն հատակագծման նախագծի (հաստատված ՀՀ Մինիստրների խորհրդի կողմից 1982թ.) նախատեսված է որպես կառուցապատման գոտի՝ առևտրահասարակական կենտրոնի շինարարության համար: Համաձայն Երևանի քաղաքապետի 26.12.96թ. հ. 1017 որոշման 2 հա հողամաս է հատկացվել Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան*

շինարարության համար: Որևէ այլ հողահատկացում այդ տարածքում չի կատարվել: Քաղաքապետի հանձնարարականով 1997թ. գարնանը դադարեցվել և որոշ դեպքերում քանդվել են այգիների տարածքը զավթած և ապօրինի կատարած շինարարությունները: Միաժամանակ տեղյակ ենք պահում, որ ՀՀ կառավարության 17.10.93թ. հ. 526 որոշմամբ այդ հատվածում 18,8 հա հողամաս է հատկացվել Երևանի կոնյակի գործարանին, որպես **օժանդակ տնտեսություն**: Համատեղ քննարկման արդյունքում կիսելով Հայաստանի Կանաչների Միության մտահոգությունը և նկատի ունենալով, որ հարցը առնչվում է քաղաքի գլխավոր հատակագծի նոր հայեցակետի մշակման, Կենտրոնի մանրամասն հատակագծման նախագծի վերանայման, բնապահպանական և պատմամշակութային խնդիրների հետ, գտնում ենք նպատակահարմար կազմելու շահագրգիռ և իրավասու հանձնաժողով, համալիր քննարկման նպատակով: Վերջնական հիմնավոր առաջարկություն տալու նպատակով խնդրում ենք տալ մեկ ամիս ժամկետ»:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար, օպերատիվ հարցերի նախարար Շ. Կարամանուկյանը նշված նամակը ուղարկում է ՀՀ քաղաքաշինության, բնապահպանության և մշակույթի նախարարներին: Հանձնարարականում (04.03.1998թ., N 010-788) ասվում է. «ՀՀ վարչապետի հանձնարարությամբ հանձնաձայնել: Քննարկումներին ներգրավել նաև Հայաստանի կանաչների միության ներկայացուցչին: Ժամկետ՝ 1-ը ապրիլի 1998թ.»: Նույն հանձնարարականով՝ նախարարների պատասխանները պետք է ուղարկվեր Երևանի քաղաքապետարան, ուր և պետք է կազմակերպվեին քննարկումները:

Հանձնարարված քննարկումներն այդպես էլ տեղի չունեցան: Հարցը տապալվեց, հավանաբար, քաղաքապետարանի ջանքերով, քանզի, ինչպես կտեսնենք, Դալմայի այգիների խնդրում Երևանի քաղաքապետարանի գլխավոր դերակատարները բոլորովին այլ տեսակետ ունեն:

Դալմայի այգիներին հատուկ կարգավիճակ տալու հարցում հետևողական աշխատանք է տանում նաև ՀՀ Բնապահպանության նախարարությունը: Քաղաքապետի տեղակալ, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը Դալմայի այգիները ոչնչացնելու ՀՀ կառավարության տխրահռչակ որոշումը (27.03.2003թ., N 1941-Ա) կայացնելուց երկու ամիս անց՝ բնապահպանության նախարար Վ. Այվազյանին գրում է (02.06.2003թ. N 02/18-2646h). «Երևանի քաղաքապետարանում քննարկվել է Ձեր նախարարության կողմից մշակված «Դալմայի այգիներ» բնության հուշարձան ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Սկզբունքորեն առարկություն չունենալով խնդրի լուծման ներկայացված առաջարկին, հայտնում ենք հետևյալը. Երևանի քաղաքապետարանի ներկայացմամբ ՀՀ կառավարությունն ընդունել է «Դալմայի այգիների» սահմանների ճշտման և կից տարածքների կառուցապատման ենթակա հողերի գոտիավորման մասին» որոշումը, որով մասնավորապես ճշտվել են պահպանման ենթակա բարձրարժեք գյուղատնտեսական նշանակության հողերի սահմանները:

ՀՀ կառավարության վերը հիշատակված որոշման վավերացումից և ուժի մեջ մտնելուց հետո առաջարկվող «Բնության հուշարձանի» սահմանների ճշգրտման և բարտեզագործմանը անդրադառնալու անհրաժեշտությունը կվերանա:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում նաև այն հանգամանքին, որ նշված տարածքները որպես գյուղատնտեսական հողեր մշտապես եղել են տնտեսական շրջանառության մեջ և օգտագործվել են նախկինում կոլտնտեսության, այժմ անհատ վարձակալների կողմից: Ձեր առաջարկությունն ընդունելու դեպքում անհրաժեշտություն է առաջանում ՀՀ հողային օրենսգրքի համապատասխան նշված տարածքի հողերը դասակարգել որպես հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակությամբ և պատմական ու մշակութային գործառնական նշանակությամբ հողերի: Այս դեպքում, կարծում ենք որոշման նախագծում պետք է սահմանվի նաև հողերի օգտագործման թույլատրելի ձևերն ու կարգը»:

Ձավեշտական պատասխան: Հենց ինքը՝ այգու ոչնչացման ծրագրի հեղինակը, «Դալմայի այգիները բնության հուշարձան ստեղծելու հարցում սկզբունքորեն առարկություն չունենալով», միաժամանակ անկեղծանում է, թե «Երևանի քաղաքապետարանի ներկայացմամբ ՀՀ կառավարությունն ընդունել է «Դալմայի այգիների» սահմանների ճշտման և կից տարածքների կառուցապատման ենթակա հողերի գոտիավորման մասին» որոշումը, որի վավերացումից և ուժի մեջ մտնելուց հետո առաջարկվող «Բնության հուշարձանի» սահմանների և քարտեզագրմանը անդրադառնալու անհրաժեշտությունը կվերանա:

Պարզից էլ պարզ է՝ այգու կառուցապատումից-ոչնչացումից հետո ինչի՞ն բնության հուշարձանի կարգավիճակ տալ, երբ այգին այլևս գոյություն չի ունենա:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ այն պնդումը, թե «գոտևորմամբ» ճշտվել են «բարձրարժեք գյուղատնտեսական նշանակության հողերի սահմանները», ամենևին չի համապատասխանում իրականությանը, քանզի այդ ծրագրով կառուցապատման տակ են դրվում լավագույն հողատեսակներն ու այգիները:

### *ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՈՇՆՉԱՑՄԱՆ «ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ»*

Երևանի քաղաքապետերը (նախորդ և այսօրվա), գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը, նրանց հովանավորները Դալմայի այգիների ոչնչացումը «հիմնավորում» են նրանով, որ իբրև դա լուրջ ներդրումների ճանապարհ կբացի, կստեղծվեն նոր աշխատատեղեր, ինչը կթուլացնի սոցիալական լարվածությունը, հողատարածքների աճուրդով վաճառքից գոյացած ֆինանսները կհարստացնեն պետական բյուջեն, իսկ նոր ճանապարհները կարագացնեն-կհեշտացնեն քաղաքի կենտրոնի հետ տրանսպորտային կապը:

Արդյո՞ք հիմնավորված են այդ հավաստումները.

ա) Այդտեղ կատարվելիք ներդրումներով կայուն աշխատատեղերի ստեղծումը իրատեսական չէ: Նույնիսկ շինարարական ժամանակավոր աշխատանքներին կարող են ներգրավվել օտարերկրյա բանվորներ և ինժեներներ, ինչպես դա արվում է Հայաստանում ամերիկյան նոր դեսպանատուն կառուցելիս և այլ ծրագրերում<sup>1</sup>:

<sup>1</sup> Դեսպանատունը կառուցվում է Դալմայի այգիների տարածքում, որի հողահատկացումը կատարվել է նույնպես ՀՀ օրենքների կոպիտ խախտումներով, իսկ դրա կառուցման մասին հասարակայնությունը իմացել է միայն այն ժամանակ, երբ շինարարական աշխատանքներն արդեն սկսվել էին: Մեզ հասած տեղեկությամբ՝ շինարարական աշխատանքներ կատարելիս ոչնչացվել են այդտեղ հայտնի և ի հայտ եկած հնագիտական մեծ արժեք ներկայացնող նյութեր: Ամերիկյան նոր դեսպանատան համալիրը, փաստորեն, դառնալու է Հայաստանի Հանրապետության գլխավոր դարպասը, քանզի այդտեղով է անցնում Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող «Զվարթնոց» օդանավակայան - Երևան մայրուղին: Նշենք նաև, որ Երևանում գործող ԱՄՆ-ի դեսպանատան շենքի տակով է անցնում մեր Հանրապետության հեռահաղորդակցության կապի գլխավոր հանգույցը:

ԱՄՆ-ի նոր դեսպանատան կառուցման համար հողահատկացում կատարելուն է ուղղված 2000թ. սեպտեմբերի 14-ի ՀՀ կառավարության միսիտ արձանագրության՝ «Հողամաս հատկացնելու մասին» քաղվածքը: Որտեղ ՀՀ կառավարությունը Երևանի քաղաքապետին, տարածքային կառավարման և քաղաքաշինության ոլորտը համակարգող, բնապահպանության նախարարություններին, պատմության ու նշակույթի հուշարձանների պահպանության վարչությանը հանձնարարում է «ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 30-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 479 որոշմանը համապատասխան մեկամսյա ժամկետում ապահովել Երևանի Ծովակալ Իսակովի պողոտային և Երևանյան լճին հարող տարածքի՝ Կենտրոնական ավտոկայանից մինչև Սեբաստիայի փողոցի տրանսպորտային հանգույցը, նոր հողօգտագործման և կառուցապատման նպատակով դրա գործառական նշանակության փոփոխության ձևակերպումը»:

Դալմայի այգիների ոչնչացման հաշվին ևս մեկ «լուրջ» ներդրման օրինակ. ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի N 503-Ա որոշմամբ Դալմայի այգիներից 5 հեկտար հողամաս է տրամադրվել «Ֆրանկ Մյուլլեր Արմենիա» ՓԲԸ Երևանում ժամացույցների մասերի արտադրության գործարան կառուցելու նպատակով:

Այգիների փոխարեն թունավոր արտադրություն: Ինչպիսի սրբապղծություն: Արդյո՞ք հողահատկացում կատարողները գիտեն թե ինչ է իրենից ներկայացնում ժամացույցների մասերի արտադրություն ասածը, երբ հայտնի է, որ նման արտադրություններում գալվանական և խիստ վտանգավոր այլ կարգի արտադրամասերի առկայությունը պարտադիր է: Ինչ է ստացվում: Քիչ

բ) Դալմալի այգիների կառուցապատմամբ մեր քաղաքացիների համար նոր աշխատատեղերի ստեղծումը, ինչպես արդեն ասվել է, խիստ կասկածելի է: Իսկ այժմ այդ այգիներում արդեն 1800 վարձակալ ընտանիք հողի ավանդական մշակմամբ իր ապրուստն է հոգում: Վարձակալների հետ մեկտեղ այգեգործությամբ և բանջարաբուստանային կուլտուրաների մշակմամբ են զբաղված նաև նրանց հարազատները: Կարելի է ասել, որ այգիների ոչնչացմամբ կորցնելու ենք մշտակայուն հազարավոր աշխատատեղեր: Ակնհայտ է, որ ոչ միայն չի թուլանա սոցիալական լարվածությունը, այլ հակառակը՝ կխորանա:

գ) Պետական գանձարանն այգիների հողատարածքի աճուրդ-վաճառքով հարստացնելու և սոցիալական լարվածությունը թուլացնելու ծիծաղելի մտածելակերպը շատ նման է ընտանիքի այն ոչ հեռատես կառավարչի գործելակերպին, երբ ընտանիքին մեկ անգամ առատ կերակուր մատուցելու խոստմամբ մորթում է նրան մշտապես կերակրող կովը: Նախ, չի էլ հայտարարվել, թե պետական գանձարան կատարվելիք մուտքերն ինչքան են լինելու: Սակայն կանխավ մի բան շատ պարզ է՝ հողի առք ու վաճառքից գերհարստանալու են պետական այն պաշտոնյաները, ովքեր մեծ շահագրգռվածություն են ցուցաբերում Դալմալի այգիների ոչնչացման խնդրում:

դ) Հարավ-արևմտյան թաղամասը կենտրոնի հետ կապված է մի շարք ճանապարհներով, իսկ նախատեսվող մայրուղուն զուգահեռ այժմ գործում է Լենինգրադյան փողոցը Ծովակալ Իսակովի պողոտային կապող և բարվոք վիճակում գտնվող բավականին լայն ճանապարհ, որը, անհրաժեշտության դեպքում, կարելի է ավելի լայնացնել: Դալմալի այգիների տարածքում նոր մայրուղու և այլ ճանապարհների կառուցման հարցը նույնպես գիտական վերլուծության չի ենթարկվել և մասնագիտական ու հասարակական քննարկումներ չեն կազմակերպվել:

«Գոտևորման» շղարշի տակ Դալմալի այգիների կառուցապատումը՝ բառիս բուն իմաստով՝ բնաջնջումը, շահագրգիռ կողմը ներկայացնում է որպես Երևան քաղաքի գլխավոր հատակագծից (1971թ.) բխող գործողություն, որի իրականացումն իբր հիմնավորված է:

Ամենևին, այդպես չէ: Բազմիցս արդեն ասվել է, որ Դալմալի այգիներում քաղաքաշինական ծրագիր իրականացնելու անհրաժեշտություն կարող էր առաջանալ միայն այն դեպքում, եթե քաղաքի բնակչության թիվն անցներ 2,5-3 միլիոնի սահմանը: Հասկանալի է, նույնիսկ այդ պարագայում տարածքը նախ պետք է զույքագրվեր՝ ըստ հողատեսակների, բուսատեսակների, անհրաժեշտ ուսումնասիրություններ կատարվեին մանրազնին քարտեզագրման համար, կազմվեր տեխնիկատնտեսական հիմնավորման նախնական տարբերակը, որից հետո այն ենթարկվեր մասնագիտական փորձաքննության, քննարկումներ կազմակերպվեին

---

աշխատատեղ, միաժամանակ՝ օդը, հողը, ջուրը աղտոտող, մարդկանց առողջությունը քայքայող արտադրությունը կառուցել Հայաստանում, այն էլ պատմամշակութային և բնապահպանական մեծագույն արժեք ունեցող մշակովի հողատարածքում, իսկ ժամացույցների հավաքման արդեն մաքուր և համեմատաբար շատ աշխատատեղ պահանջող արտադրությունները կազմակերպել ուրիշ երկրներում: Եթե այս ծրագիրը անտեղյակության արդյունք չէ, ուրեմն այն պարզապես մեր ծաղկուն այգիները աղբավայր դարձնելու և մեր մայրաքաղաքը կանաչ տարածքներից զրկելու միտում է: Ըստ որոշ տվյալների, «Ֆրանկ Մյուլլեր Արմենիա»-ի բաժնետերը Շվեյցարիայի քաղաքացի Վարդան Սըրմաթեչն է և իբրև թե հենց նա է ցանկացել, որպեսզի նշված գործարանը կառուցվի Դալմալի այգիների տարածքում: Ջարմանալի զուգահղիպություն: «Հաղթանակ» զբոսայգուն հարող անտառածածկ տարածքի ոչնչացումը և այնտեղ «Կանադական թաղամաս» կառուցելը նույնպես «հիմնավորվում» է, իբր կանադահայերը ցանկացել են հենց այդտեղ առանձնատներ կառուցել, և քանի որ նրանք Կանադայում հետևողական գործունեություն են ծավալել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խնդրում, հետևաբար, նպատակահարմար չէ նրանց ցանկությունը մերժել:

Նախ, անհավատալի է, որ կանադահայությունը կարող է այդպիսի միտք արտահայտել և ապա, միթե որևէ անձի ցանկությամբ է, որ Երևանի քաղաքաշինական ծրագրերը պետք է մշակվեն ու իրականացվեն: Հետաքրքիր է, իսկ ինչո՞վ են զբաղված քննարկվող բնագավառի պետականորեն հատուկ լիազորված մարմինները:

գերատեսչություններում, գիտական ու գիտատեխնիկական հաստատություններում և հասարակայնության շրջանում:

Վստահ ենք, որ գիտական վերլուծություններն ու խնդրի քննարկումները, միևնույն է, կմերժեին զրկել մայրաքաղաքին հարուստ կանաչ տարածքից, իսկ հայ ժողովրդին՝ պատմամշակութային մեծ արժեքից:

### *ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ*

Դալմայի այգիների հանդեպ ունեցվածություններն այսօր չէ, որ սկսվել են: Երևանի քաղաքապետ Ա. Միրզոյանը իր N 4/3 որոշմամբ (31.05.1996թ.) Դալմայի այգիների մաս կազմող՝ Սարգուրի այգիներից 14,5 հեկտար հողատարածք հատկացրել էր «Գնամ» ՍՊԸ՝ տոնավաճառի շինարարություն իրականացնելու համար: 1996թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի կանաչների միությունը դիմել է (Կ-71) ՀՀ գլխավոր դատախազ Ա. Գևորգյանին. «...*Հայտնում ենք Ձեզ, որ հողահատկացումը կատարվել է էկոլոգիական փորձաքննության բացակայության պայմաններում...*»: Այգիներում շուկա կառուցելը կանխվեց հատկապես գլխավոր դատախազի, հասարակության գործուն միջամտության և մամուլի աջակցության շնորհիվ:

Երևանի հաջորդ քաղաքապետ Վ. Սիրադեղյանը 1996թ. դեկտեմբերի 26-ի N 1017 որոշմամբ, առանց կառավարության կարծիքը հարցնելու, Դալմայի այգիներից երկու հեկտար հողատարածք էր հատկացրել Իրանի Իսլամական Հանրապետությանը՝ դեսպանատուն կառուցելու համար: ՀԿՄ ջանքերի շնորհիվ նշված և այդ տարածքում մյուս հողահատկացումներն ի կատար չեն ածվել:

Դալմայի այգիներն ամբողջությամբ ոչնչացման ծրագիրը, ըստ մեր ունեցած տվյալների, մոտ հինգ տարվա պատմություն ունի:

2000թ. Երևանի քաղաքապետ Ա. Բազեյանը և գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը ՀՀ վարչապետին ներկայացրին (N 01/18-2702Ն, 07.08.2000թ.) Դալմայի այգիների այսպես կոչված «ֆունկցիոնալ գոտևորման սխեմա» ծրագիրը, որը ոչ այլ ինչ էր, քան այգիների բնաջնջման փորձ:

Առաջարկվում էր կառուցել՝ արագընթաց ճանապարհ, հասարակական նշանակության կառուցապատում (25 հեկտար), երկու բնակելի զանգված (70 հեկտար), գուլֆի դաշտ-դիվանագիտական ակումբ (50-60 հեկտար), դիվանագիտական կամ այլ ծրագրային կառուցապատում (12,5 հեկտար), իսկ *«այգու կենտրոնական հատվածը մինչև Իսակովի պողոտա մնում է «Դալմայի այգիներ»-ի ամրացման ենթակա տարածք (մոտ 200 հա),- ասվում է ՀՀ կառավարություն ներկայացված բացատրագրում:*

Այդ ծրագիրը կտրականապես մերժեցին ՀՀ գյուղատնտեսության, բնապահպանության, մշակույթի և քաղաքաշինության նախարարությունները՝ ոլորտի պետականորեն հատուկ լիազորված մարմինները: Օրինակ, Երևանի քաղաքապետ Ա. Բազեյանին ուղղված ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Ա. Խաչատրյանի ստորագրությամբ գրությունում (21.08.2000թ., N 07-10-1957) մասնավորապես ասվում է. *«ՀՀ վարչապետի 2000թ. օգոստոսի 12-ի N 100-3821 հանձնարարականի համաձայն նախարարությունը ուսումնասիրել է Երևանի «Դալմայի այգիներ» տարածքի «գոտևորման սխեմա» նախագիծը: Հայտնում է, որ «Դալմայի այգիների հողերը դասվում են բնապահպանական նշանակության հողերի շարքին, որոնց վրա արգելվում է շինարարական և նպատակային օգտագործմանը հակասող ամեն մի գործողություն, նախարարությունը տալիս է իր բացասական կարծիքը գոտևորման սխեմայի վերաբերյալ»:*

Բարեբախտաբար, այդ ծրագիրը ժամանակին ձախողվեց: 2000թ. սեպտեմբերի 7-ին Դալմայի այգիների «ֆունկցիոնալ գոտևորման սխեմայի» հարցը քննարկման դրվեց ՀԿՄ խորհրդի ընդլայնված նիստում (Գրողների միության տան դահլիճում), որտեղ Հանրապետության նշանավոր մասնագետներն իրենց զեկույցներում ներկայացրին Դալմայի այգիների բազմապիսի արժեքները:



Այդ նիստը լուսաբանվեց լրատվամիջոցներով<sup>2</sup>:

2. «Գրողների միությունում տեղի ունեցավ Կանաչների միության հավաք, որի նպատակն էր արգելել Դալմայի ավանդական այգիների տարածքում կառուցապատումը: Մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, Երևանի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետարանի և հասարակայնության ներկայացուցիչներ: Կանաչների միության նախագահը իր ելույթում ընդգծեց Դալմայի այգիների պատմական, բնապահպանական արժեքը և դիմեց հավաքվածներին՝ թույլ չտալ կառուցապատել երեք հազարամյակների ընթացքում մշակվող այս տարածքը: Երևանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանն իր պատասխան խոսքում նշեց, որ քաղաքապետարանի կողմից առաջարկվող նախագծի նպատակը Դալմայի այգիների պահպանումն է: Նրա խոսքերով, Երևանի «թոքերը» հանդիսացող այս հողատարածքը պահպանելու համար կազմվել է գոտևորման սխեմա՝ այգիները

Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը նիստի ավարտին, ինձ հետ առանձնազրույցում խոստովանեց, որ ավստոս մինչ այդ չի իմացել, թե ինչ անգնահատելի արժեք է իրենից ներկայացնում այդ հողատարածքը և խոստացավ, որ հետայսու ինքը նույնպես ջանք չի խնայի այգու պահպանության հարցում:

Սակայն այդ հավաստումից ընդամենը մեկ շաբաթ անց, 2000թ. սեպտեմբերի 14-ին, Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը դիմել է (N 02/18-3428) համապատասխան մարմիններին՝ «Դալմայի այգիներ»-ի տարածքից 4000 մ<sup>2</sup> հողամաս «Մուլտի Լեոն» ԲԲԸ-ին հատկացնելու առաջարկությամբ՝ գազալցման կայան կառուցելու նպատակով:

Ինչպես տեսնում ենք, խոստումը մնաց միայն որպես խոստում:

Կանաչ տարածքների ոչնչացման, չհիմնավորված և ապօրինի շինարարության ծավալման գործում իրենց բացասական հետևանքներն ունեցան հայ ժողովրդի հաղթանակի խորհրդանիշ հանդիսացող «Հաղթանակ» զբոսայգու տարածքում հյուրանոց կառուցելուն դեմ դուրս եկած տեղի բնակչության և հասարակայնության բողոքները: Հանրապետության բարձր մարմիններին և գլխավորապես ՀՀ

Երկու կողմից ձգվող ավտոճանապարհներով պետք է սահմանազատվեն ապօրինի կառուցապատումներից, իսկ նախատեսված գույքի հրապարակի և դիվանագիտական ակումբի կառուցումը չի խաթարի քաղաքի այս հատվածի կանաչ գոտին («Երկիր», 08.09. 2000թ.):

«Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը նշեց, որ «Դալմայի այգիների... վերաբերյալ մշակված կանոնակարգը այգիները ոչ թե վերացնելու, այլ պահպանելու նպատակով է: Այս հարցադրումը համարելով չհիմնավորված, որը հետագայում սպառնում է «Դալմայի այգիների» իսպառ ոչնչացմանը, Կանաչների միության նախագահը բերեց Դավթաշեն թաղամասի օրինակը, թե ինչպես ժամանակին հանդգցված էին, որ նորակառույց թաղամասում կպահպանվեն տեղի այգիները, սակայն կառուցապատումը ոչնչացրեց դրանք («Ազգ», 08.09.2000թ. );

«Ն. Սարգսյանը հայտնեց, թե նախապես չի տեղեկացվել հանդիպման թեմային ու զարմացած է, թե ինչպես է տարբեր ատյաններում նախնական քննարկումների փուլում գտնվող հիշյալ բացատրագիրը նման լայն քննարկման առարկա դարձել: Սույն փաստաթուղթը յուրովի մեկնաբանելով, նա հավաստիացրեց, թե դրանում որևէ դավադրություն չկա և իրենց նպատակը Դալմայի այգին պահպանելն ու այն ապօրինի զավթումներից փրկելն է» («Հայոց աշխարհ», 08.09. 2000թ.):

«Պեղումների ժամանակ հենց այս տարածքից են հայտնաբերվել գինու 800-1000 լիտր տարողությամբ 400 կարասներ: Այսօր էլ բեղուն այգիները խաղողի գենոֆոնդի պահպանման տեսանկյունից անգնահատելի արժեք ունեն: Դրանք քաղաքի թուլացած թոքերին շունչ են տալիս... Երևանի պատմաճարտարապետական հուշարձանների պահպանության վարչության պետ Արտյոմ Գրիգորյանի համար այդ ծրագիրը սրբապղծություն է քաղաքի պատմության նկատմամբ: Որքան էլ վրդովված,

այնուամենայնիվ, Կանաչների միության նախագահը կարծում է, որ շատերի ակտիվությունը գրգռող հեռահար ծրագրերը նաև դրանց հեղինակների անգիտության ու փորձի պակասի հետևանք են: Ուրեմն ոչ թե միտումնավոր, այլ ակամա վնասարարություն: Եվ կարծես հաստատելով նրա խոսքը՝ քաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը դիմեց գիտնականներին՝ խնդրելով նրանց քաղաքապետարան ներկայացնել այգիների պատմահնագիտական նշանակության վերաբերյալ մանրակրկիտ տեղեկություններ: Ինքը որոնել, բայց չի գտել դրանք: Գլխավոր ճարտարապետը փորձում էր հանգստացնել հավաքվածներին՝ ասելով, որ իրենց նպատակը ոչ թե Դալմայի այգիների ոչնչացումն է, այլ դրանք կորուստից փրկելու ուղիների որոնումը («Ժամանակ», 08.09.2000թ.):

«Չերթական անգամ Չայաստանի «կանաչները» դեմ արտահայտվեցին ապօրինի շինարարությանը Երևանի կանաչապատ տարածքներում: Սեպտեմբերի 7-ին Կանաչների միության նախագահը կազմակերպել էր քննարկում՝ ոչ կառավարական բնապահպանական կազմակերպությունների, գիտնականների, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ: ... «Կանաչները» քաղաքապետարանին մեղադրեցին այն հարցում, որ հենց քաղաքապետարանը և, մասնավորապես, գլխավոր ճարտարապետը, շարունակում է օժանդակել «նվաճողներին», գործուն քայլեր չի ձեռնարկում այգիների պահպանման ուղղությամբ: ... Երևանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի այն բացատրությունները, որ քաղաքապետարանը կասեցրել է քաղաքի նախկին ղեկավարների օրոք սկսված ապօրինի շինարարությունը և քայլեր կձեռնարկի այգիների պահպանման ուղղությամբ, չհանգստացրին հավաքված հասարակայնությանը: Խաղողագործության մասնագետներն ու գիտնականները ներկայացրին այգիների հազարամյա պատմությունը: Դրանց եզակիությունը այդ ժամանակամիջոցում ստեղծված խաղողատեսակների, շատ բուսատեսակների գենոֆոնդի մեջ է, որոնք գրանցված են Կարմիր գրքում: «Ես չեմ հավատում չինովնիկներին և տագնապ ունեմ, որ մի օր կարթնանանք և կտեսնենք, որ այգիներն այլևս չկան», - հայտարարեց հայտնի նկարիչ Էդուարդ Իսաբեկյանը: («Նոյան Տապան», 07. 09.2000թ.):

Նախագահին հղած դիմումներում մանրամասն ներկայացված էին այդ հյուրանոցի կառուցման հետ կապված բոլոր օրինախախտումները: Սակայն օրենքի դրույթներից բխող բողոքները արհամարհվեցին, իսկ պաշտոններից հեռացվեցին պետական այն ծառայողները, ովքեր համարձակություն ունեցան ասելու, որ հյուրանոցը կառուցվում է ապօրինաբար: Թերևս զուգադիպություն համարվի, սակայն հենց այդ ժամանակ հիմք դրվեց կանաչ տարածքների առավել արագընթաց և անխնա ոչնչացմանը:

Չատկանշական է մեր հանրապետության պաշտոնաթերթի այդ օրերի հրապարակած «Ներդրումները խոչընդոտողները կպատժվեն» վերնագրով սարսափազդու առաջնորդողը. *«Նախագահ Ռոբերտ Քոչարյանի երեկ անցկացրած աշխատանքային խորհրդակցության ժամանակ, որին մասնակցել են արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող, բնապահպանության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարները, հանրապետության գլխավոր դատախազը, Երևանի քաղաքապետը, գլխավոր ճարտարապետը և հուշարձանների պահպանման վարչության պետը, նշվել է, որ շատ հաճախ տարբեր պատճառաբանություններով արհեստական խոչընդոտներ են ստեղծվում առանձին գործարար ծրագրերի իրականացման համար: Բերվել են կոնկրետ օրինակներ: Դատապարտելով նման երևույթները, հանրապետության նախագահն ասել է, որ խստագույնս կպատժվեն բոլոր այն պաշտոնյաները, ովքեր կփորձեն խանգարել կամ արհեստական արգելք ստեղծել ներդրումների և բիզնես ծրագրերի համար»* («Չայաստանի Չանրապետություն», 07.12.2000թ.):

Այդ հրապարակումից երկու օր անց, պատասխանելով «Չայոց աշխարհ»-ի թղթակցի այն հարցին, որ «Չաղթանակ» զբոսայգում էլ հյուրանոց է կառուցվում և

լուրջ ընդդիմություն կա դրան՝ մասնավորապես բնապահպանների կողմից, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը մասնավորապես ասել է. *«Միգուցե կոշտ բաներ պետք է ասեն, բայց ասելու են: Ես հիշում եմ Ալավերդու պղնձամուխիբեդենային կոմբինատի փակման ողջ գործընթացը՝ նաև շնորհիվ բնապահպանների: Հիշում եմ նաև «Նաիրիտի» և ատոմակայանի փակման ողջ գործընթացը...: Այստեղ ես ոչ մի պրոբլեմ չեմ տեսնում:*

*Պետք է կառուցել և կառուցելու ենք: Միայն գիտենք, որ մարդկանց մի տեսակ կա, որ բացի խանգարելուց այլ նպատակ չունեն: Այդ հյուրանոցը ուղղակի գեղեցկացնելու է տարածքը: Հիմա այնտեղ ուղղակի աղբանոց է, հարցրեք շրջակայքում ապրող մարդկանց»* («Հայոց աշխարհ», 09.12. 2000թ.):

Այստեղ տարածքի «գեղեցկացում» ասելով պետք է հասկանալ՝ բարձրահարկ շենքի, ասֆալտի և բետոնի տակ դնել զբոսայգու ամենածառաշատ տարածքը (դժբախտաբար, այսօր այդ նույն «գեղեցկացում»-ը սպառնում է նաև Դալմայի այգիներին): Իսկ այն, որ իբրև այնտեղ աղբանոց է եղել դա ուղղակի ապատեղեկատվություն է և բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Թերահավատներին խորհուրդ ենք տալիս կարդալ՝ *«շրջակայքում ապրող մարդկանց»* ցավով ու կսկիծով գրված, սակայն անպատասխան մնացած՝ ՀՀ նախագահին հղած, զբոսայգում ակնհայտ ապօրինության կանխելն աղերսող դիմում-բողոքները: Նախագահի այն արտահայտությունից, թե *«Հիմա այնտեղ ուղղակի աղբանոց է»*, կարելի է նաև ենթադրել, որ նա մասնակից է եղել հյուրանոցի տեղի ընտրությանը (հյուրանոցի շինարարական աշխատանքները սկսելուց օրեր առաջ տարածքը երկու անգամ հրդեհել են և այնտեղ մի քանի տոպրակ աղբ են թափել):

Անհրաժեշտ է նշել, որ այն ժամանակ, երբ մանուլը և մյուս լրատվամիջոցները սուր քննադատության էին ենթարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետին՝ կանաչ տարածքներն անխղճորեն ոչնչացնելու և քաղաքաշինական չիմնավորված ծրագրեր իրականացնելու համար, ՀՀ նախագահը նրան պատվոգիր հանձնեց:

Նաև կանաչ տարածքների ոչնչացման ճանապարհը առավել հարթելու համար Երևանի քաղաքապետ Ա. Բազեյանի և գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանի միջամտությամբ ու ջանքերով ՀՀ կառավարությունը 2000թ. դեկտեմբերի 16-ին ընդունեց NN 829 և 830 որոշումները, որոնցով փոփոխություններ կատարվեցին Կառավարության 1998թ. (30-ը հուլիսի) NN 478 և 479 որոշումներում և Երևանի քաղաքապետարանին արտոնություն տրվեց՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթներին չհակասող փոփոխություններ կարող են իրականացվել առանց քաղաքաշինության նախարարության հետ համաձայնեցման: Այդ արտոնությունը վերաբերում է նաև մեր հանրապետության մյուս մարզպետներին: Միտումը պարզ է՝ պաշտոնյաներին հնարավորություն ընձեռել՝ շրջանցելու օրենքներում և նորմատիվային փաստաթղթերում ամրագրված որոշ պարտադիր պահանջները:

Հավանաբար, հենց այդ օրերին ծնվեց, այսպես ասած, օրենքները մեղմելու-պարզեցնելու գաղափարը... Առուփախի մթնոլորտի ձևավորման, հողերի զավթման ու ավերման և հաճախ անօգուտ ու վնասաբեր ներդրումներ կատարելու գործում վճռորոշ դեր կատարեց և շարունակում է կատարել ՀՀ կառավարության ստորև ներկայացվող «պարզեցումները»:

2000թ. դեկտեմբերի 28-ի «ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների մասին» ՀՀ կառավարության նիստի արձանագրության քաղվածքում (N 58) մասնավորապես ասվում է. *«ՀՀ գործարար միջավայրի հստակեցման, կարգավորման և պարզեցման անհրաժեշտությունից ելնելով՝ 1. Հավանություն տալ ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների ցանկին (կցվում է): 2. ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարությանը՝ ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ մեկտեղ մինչև 2001 թվականի հունվարի*

10-ը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել առաջարկություններ համապատասխան բնագավառներում ստուգումների և տեսչական գործունեության պարզեցման, հստակեցման և վերոհիշյալ գործառույթները տարածքային առումով վերակազմավորելու վերաբերյալ: 9. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ մինչև 2001 թվականի փետրվարի 1-ը մշակել և ՀՀ կառավարություն սահմանված կարգով ներկայացնել «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: 10. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ մինչև 2001 թվականի հունվարի 10-ը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել տեղեկատվություն անշարժ գույքի գրանցման պարզեցման ՀՀ օրենսդրությամբ ընձեռված առկա հնարավորությունների մասին, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ գրանցման ընթացակարգերը պարզեցնելու, հստակեցնելու, ինչպես նաև գործառույթները հանրությանը մատչելի և իրազեկ դարձնելու ուղղությամբ: 11. ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարարությանը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Երևանի քաղաքապետի հետ համատեղ մինչև 2001 թվականի հունվարի 10-ը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնել. ա) քաղաքաշինության գործունեության իրականացման ընթացակարգերի պարզեցման, մասնակից պետական մարմինների թվի կրճատման, ինչպես նաև վերահսկման գործառույթները հանրությանը մատչելի և իրազեկ դարձնելու ուղղությամբ առաջարկություններ...

ՀՀ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների Ցանկ՝ 1. Միացնել/միավորել ու կրճատել պետական ստուգող տեսչությունները. Փոփոխության ենթարկել նախագահի հրամանագիրը (հիմք), որում տրված է պետական այն գործակալությունների ցանկը, որոնց թույլատրվում է բիզնեսի ստուգումներ կատարել. Միավորել համանման տեսչությունները (օրինակ, զանազան առևտրական տեսչությունները). Միավորել պետական տեսչությունների տեղական գրասենյակները (օրինակ, սանհիտարական տեսչությունը). Կրճատել ստուգելու իրավունք ունեցող տեսուչների ընդհանուր թիվը (20 տոկոսով). 2. Փոփոխության ենթարկել պետական տեսչությունների կանոնադրությունները, համապատասխանեցնելով շուկայական սկզբունքներին և սահմանափակել բիզնեսի մեջ դրանց հայեցողական միջամտությունների հնարավորությունները (օրինակ, աշխատանքի տեսչությունը)... 7. Շինարարական և շինհրապարակների իրավունքներ՝ վերամշակել կարգը, նվազեցնելով մի շարք մասնակից գործակալությունների թիվը: Էապես կրճատել շինարարական բիզնեսի համար տեխնիկական արտոնագրման մի շարք պահանջներ...»:

Իսկ 2000թ. օգոստոսի 30-ի N 1137 որոշմամբ Երևանի քաղաքապետ Ա. Բազեյանը և գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը, ապօրինաբար և հատուկ նպատակ հետապնդելով, չեղյալ համարեցին Երևանի քաղաքապետարանի 1991թ. ապրիլի 12-ի N 6/18 որոշումը, որով Դալմայի այգիները համարվում են մշակութային հուշարձան: Այդ որոշման կասեցմամբ՝ քաղաքապետարանը ՀՀ մշակույթի նախարարությանը փորձում է զրկել օրինակ, Դալմայի այգիների խնդրում իր կարծիքը հայտնելու իրավունքից: Անհասկանալի է այն, որ կատարվածից ընդամենը երկու ամիս առաջ Ա. Բազեյանը Դալմայի այգիներից հողատկացման հարցով ՀՀ տարածքային կառավարման և քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար Լ. Հակոբյանին հղած գրությունում (թիվ 01/18-426,30.06.2000թ.) նրբանկատորեն նշում է, որ «...առաջարկվող տարածքը գտնվում է բնապահպանական հուշարձան «Դալմայի այգիներ»-ի սահմանում»:

Դալմայի այգիներն ամբողջությամբ և միանգամից կառուցապատել-ոչնչացնելու ծրագիրը ձախողվելուց հետո նրանք, հատկապես Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը և այդ ժամանակահատվածի քաղաքապետերը, փոխեցին իրենց ռազմավարությունը: Որոշեցին այգին յուրացնել մաս առ մաս:

Այսպես, Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը և գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը 2002թ. հոկտեմբերի 11-ի N 01/18-1300 գրությամբ՝ ՀՀ կառավարությանը որոշման նախագիծ են ներկայացրել. «Դալմայի այգիների հյուսիս-արևելյան հատվածում, Աթենքի փողոցի հարավային և հարավ-արևմտյան եզրագծով, Սովխոզային, Լենինգրադյան փողոցներով և նախագծային արագընթաց մայրուղով սահմանափակված տարածքում առանձնացնել 63.0 հա մակերեսով հողատարածք՝ ընդգրկելով «բնակավայրերի հողեր» նպատակային նշանակության հողերի դասակարգման մեջ», որը, բարեբախտաբար, նույնպես մերժվեց, գլխավորապես ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության, քաղաքաշինության նախարարությունների շնորհիվ:

Այդ առումով առանձնապես ուշագրավ է ՀՀ բնապահպանության նախարար Վ. Այվազյանի դիրքորոշումը (07.11.2002թ., N 1-12/1567). «Ի պատասխան Ձեր 11.10.2002թ. N 01/18-1300 գրության՝ «Հողերի նպատակային նշանակության փոփոխության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ բնապահպանության նախարարը դեռևս 23.05.2002թ. N 1-12/758 գրությամբ ներկայացրել է իր դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ: «Դալմայի այգիները» համարվում են Հայ ժողովրդի մշակութային ժառանգություն և մինչև նրան ժամանակ դրա ամբողջականության հարցը բխում է «Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության մասին» Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից: Ուստի ՀՀ բնապահպանության նախարարությունը «Դալմայի այգիների» նշված տարածքից 63 հա հողերի առանձնացումը և «բնակավայրերի հողեր» նպատակային նշանակության հողերի դասակարգման մեջ ընդգրկելը գտնում է ոչ նպատակահարմար»:

ՀՀ բնապահպանության նախարարի այն ծանրակշիռ փաստարկը, թե «Դալմայի այգիները» համարվում են Հայ ժողովրդի մշակութային ժառանգություն և մինչև նրան ժամանակ դրա ամբողջականության հարցը բխում է «Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության մասին» Կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորություններից» ամենևին չի հուզում Երևանի կանաչ տարածքները հետևողականորեն, նույնիսկ կարելի է ասել՝ ծրագրված ոչնչացմամբ տարված քաղաքապետարանի պաշտոնյաներին:

Այսպես, Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը, ցուցաբերելով անկոտորում կամք և սևեռուն հետևողականություն, 2003թ. հունվարի 29-ին N 02/18-7148 հ փաստաթղթով դիմել է ՀՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարներին. «Կից ներկայացնելով Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքում 6,0 հա «Գյուղատնտեսական նշանակության» հողերի նպատակային նշանակության փոփոխության և դրանից 3,0 հա մակերեսով հողամասը «Ռենկո Արմեստեյտ» ՍՊԸ-ին դիվանագիտական թաղամաս կառուցելու նպատակով առանց մրցույթի, վարձակալության իրավունքով տրամադրելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը, խնդրում եմ Ձեր եզրակացությունը»:

Գլխավոր ճարտարապետը նախարարներին նաև տեղեկացնում է, որ «Կոնգրես» հյուրանոցի տնօրեն Մ. Ֆրանչեսկին բնակելի թաղամասը կառուցելու է իր միջոցներով, իսկ տեղի ընտրությունը «պայմանավորված է նաև ոչ հեռու գտնվող ԱՄՆ-ի նոր դեսպանատան կառուցման հանգամանքով»:

«Հանճարեղ» հիմնավորում:

Ն. Սարգսյանը կարծես վարչապետի կամ թե կառավարության ֆունկցիան իր վրա է վերցրել: Իսկ ինչ վերաբերում է «Կոնգրես» հյուրանոցի տնօրենի՝ նոր հողատարածք վերցնելու (կառուցապատել-վաճառելու նպատակով) պահանջին, պետք է ասենք, որ անտեսելով, օրինակ, ՀՀ բնապահպանության նախարարության անհամաձայնությունն այդ հյուրանոցը կառուցվել է Երևանի ամենահին այգու՝ «Կոնայգու» տարածքում: Այդ այգու հարավային հատվածում «Իտալական» ևս մեկ բարձրահարկ շենք է կառուցվել: Այգու բնաջնջումը ամբողջացրեց այդտեղ իտալական դեսպանատան և դրանց սպասարկող ճանապարհի՝ Իտալիայի կոչվող

փողոցի կառուցմամբ: Դալմայի այգիների Աթենքի փողոցին հարող տարածքում տեղադրված «Ռենկոյի» շինարարական բազա-պահեստարանի հարևանությամբ լցված է հենց «Ռենկոյի» կողմից նորոգած «Երևան» հյուրանոցի շինարարական աղբը (մինչ այդ այնտեղ խաղողի և ծիրանի այգիներ էին): «Հանրապետական» հրապարակի նորոգման շինարարական աղբը նույնպես լցված է «Ռենկոյի» շինարարական բազա-պահեստարանի մոտակայքում: Աղբակալված հողատարածքում խաթարվել է նաև գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցը: Վարձակալների պնդմամբ, վերջին տարիներին համապատասխան ծառայությունները միտումնավոր խոչընդոտում են ջրամատակարարումը: Հավանաբար, այստեղ առկա է փոխայամանավորվածություն:

Հասկանալի է, որ նշված ապօրինի գործողությունների միակ պատասխանատուն ՀՀ որոշ իշխանավորներն են: Ջարմանք է հարուցում այն, որ ժողովրդի և պետության շահերը պաշտպանելու համար համեմատաբար շատ բարձր աշխատավարձ ստացող պաշտոնյաները չեն ցանկանում զբաղվել իրենց վերապահված բուն խնդրով, ինչը բերելու է մեր Երկրի իրավական դաշտի լիովին անապատացման:

Չնայած ակնհայտ ճնշումներին, ՀՀ բնապահպանության նախարար Վ. Այվազյանը կտրականապես մերժում է (24.02.2003թ., N 1(2)-08/215) գյուղատնտեսական բարձրակարգ հողերը կառուցապատման տակ դնելու՝ Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանի հերթական առաջարկը. *«Ի պատասխան Ձեր 29.01.2003թ. N 02/18-7148 հ գրության՝ «Հողերի նպատակային նշանակության փոփոխության և «Ռենկո Արմեստեյտ» ՍՊԸ առանց մրցույթի, վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են հետևյալը. ՀՀ կառավարության որոշման նախագծում նշված 6.0 հա տարածքը իրենից ներկայացնում է լիարժեք, բարձրարժեք խաղողի այգի: Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի տեղափոխումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիա թույլատրվում է բացառիկ դեպքերում: Սյուս կողմից Երևան քաղաքի ներկայիս էկոլոգիական վիճակի վատթարացումը բացատրվում է նաև կանաչապատ տարածքների կրճատմամբ: Հաշվի առնելով վերը նշվածը ՀՀ բնապահպանության նախարարությունը ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ չի կարող տալ դրական եզրակացություն»:*

Այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը, անտեսելով բնապահպանության, գյուղատնտեսության, քաղաքաշինության նախարարությունների բացասական կարծիքները, 2003թ. մարտի 27-ին ընդունում է N 503-Ա որոշումը, ուր ասվում է. *«Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի չորրորդ մասի ու 76-րդ հոդվածի հինգերորդ մասի և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի միջնորդությունը՝ ՀՀ կառավարությունը որոշում է. 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևանի Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքից 3,0 հեկտար մակերեսով հողամասն առանց մրցույթի, վարձակալության իրավունքով՝ 50 տարի ժամկետով «Ռենկո Արմեստեյտ» ՍՊԸ՝ Երևանում դիվանագիտական թաղամաս կառուցելու նպատակով...: 2. Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերի տրամադրման և շինարարության համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումները»:*

Իբրև որոշման կայացման հիմք ներկայացվող ՀՀ հողային օրենսգրքի նշված հոդվածները վերաբերում են միայն վարձակալությանը (Հոդված 48 - 4. «Պետության և համայնքի հողերից հողամասերի վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Հողամասերի՝ առանց մրցույթի տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը»): Հոդված 76 - 5. «Հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը»), հետևաբար, ՀՀ կառավարության որոշման միակ

հիմքը «Երևանի քաղաքապետի միջնորդությունն» է: Հետաքրքիր է իմանալ, դա ի՞նչ միջնորդություն է՝ ընկերային, թե ֆինանսական:

Հիմք ընդունելով իր իսկ եռանդուն ջանքերով և, ինչպես որոշման մեջ նշվում է, միջնորդությամբ ձեռք բերած 503-Ա որոշումը՝ Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը 2003թ. հունիսի 23-ին N 1348-Ա որոշմամբ «Ռենկո Արմէստեյտ»-ին Դալմայի այգիներից հողատարածք է հատկացնում. «Ի կատարումն ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի «Ռենկո Արմէստեյտ» ՍՊԸ և «Ֆրանկ Մյուլլեր Արմենիա» ՓԲԸ առանց մրցույթի, վարձակալությամբ հողամասեր տրամադրելու մասին» հ. 503-Ա որոշման. 1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» հ.286 որոշման 36 կետի «Դ» ենթակետով, «Ռենկո Արմէստեյտ» ՍՊԸ (հետագայում կառուցապատող)՝ Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքից, դիվանագիտական թաղամաս կառուցելու նպատակով, առանց մրցույթի տրամադրել 3,0 հա մակերեսով հողամաս, վարձակալության իրավունքով, 50 տարի ժամկետով: 3.1. Երևանի քաղաքապետի անունից կառուցապատողի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր...»:

Այս որոշումն ընդունելուց առաջ, համաձայն գործող օրենսդրության, Երևանի քաղաքապետարանը նախ, պետք է օրենքի սահմաններում լուծեր առկա վարձակալների խնդիրը, երբ օրենսդրությունը առավելապես առկա վարձակալների օգտին է: Օրինակ, ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ կետում ամրագրված է. «Վարձատուի փոփոխման դեպքում վարձակալության պայմանագիրը կարող է դադարել միայն Քաղաքացիական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով»: Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 619-րդ հոդվածը սահմանում է, որ նույնիսկ գույքի սեփականատիրոջ փոփոխության դեպքում վարձակալության պայմանագիրը ենթակա չէ լուծարման կամ փոփոխման, քանի դեռ պայմանագրի ժամկետը չի լրացել, կամ վարձակալը պայմանագրային խախտում թույլ չի տվել, կամ առկա չէ կողմերի համատեղ համաձայնությունը: Իսկ ժամկետի լրանալու՝ ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն վարձակալական պայմանագիր կրկին կնքելիս նախկին վարձակալներն ունեն նախապատվության իրավունք:

Անհրաժեշտ է նշել, որ Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի 1348-Ա որոշումը գերազանցում է ՀՀ կառավարության 503-Ա որոշմանը, քանզի վերջինս վերաբերում է միայն վարձակալության խնդիրներին և գյուղատնտեսական հողերի կարգավիճակի փոփոխությանը, առավել ևս դրանք կառուցապատելու իրավունք չեն վերապահում: Այսինքն, քաղաքապետի որոշումը կամայական է և հակասում է ՀՀ կառավարության նշված որոշմանը:

Հայաստանի կանաչների միությանն ուղղված դիմումում «Ռենկո Արմէստեյտ»-ին հատկացված հողատարածքի վարձակալներից՝ Հ. Սարգսյանը տեղեկացնում է, որ 2003թ. նոյեմբերի 27-ին Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները տեխնիկայի օգնությամբ քանդել են Ծովակալ Իսակովի պողոտային հարող, վարձակալությամբ իրեն, ինչպես նաև մյուս քաղաքացիներին հատկացված հողատարածքի ցանկապատերը, պատճառաբանելով, թե այդտեղից երեք հեկտարը շինարարություն իրականացնելու նպատակով հատկացվել է իտալական ինչ որ կազմակերպության, այն դեպքում, երբ հողօգտագործողների վարձակալության պայմանագրերի ժամկետները ավարտվում են միայն 2008թ. դեկտեմբերին: Դիմումում նա գրում է. «Ինձ զարմանք է պատճառում և զայրույթ է առաջացնում այն փաստը, որ հողատարածքը հատկացվում է օտարերկրյա քաղաքացիներին այն տեղերից, որտեղ գերիշխում է կանաչապատ տարածքը, որտեղ քրտինք է թափվել յուրաքանչյուր ծառի և թփի համար»:

Տեղեկացանք, որ շինարարություն իրականացնելու նպատակով ցանկապատը քանդվել է ոստիկանների (16 ոստիկան, սպաներ) հսկողությամբ ու աջակցությամբ,

այն դեպքում, երբ քանդողները շինարարություն իրականացնելու թույլտվություն չեն ունեցել և մինչև այժմ էլ չունեն:

Փաստորեն, ոստիկանությունը նպաստել է ապօրինի գործողություն կատարելուն: Ցավով պետք է նշենք, որ ոստիկանության այդպիսի գործելակերպը միայն հիշյալ դեպքով չի սահմանափակվում<sup>3</sup>:

«Ռենկո Արմէստեյտ»-ին հատկացված հողատարածքի վարձակալները 2004թ. հունվարի 26-ին դիմել են Երևանի քաղաքապետ Ե. Ջախարյանին: Դիմումի պատճենը նրանք հանձնել են Հայաստանի կանաչների միությանը: Այնտեղ մասնավորապես ասվում է. «Մենք թվով 12 քաղաքացիներս համաձայն հողային օրենսգրքի պահանջների Երևանի Մալաթիա-Սեբաստիա թաղապետարանի հետ 10-ից 25 տարի ժամկետով կնքել ենք հողի վարձակալության պայմանագրեր, որոնց

<sup>3</sup> Երևան քաղաքի արևելյան անտառածածկ տարածքում, նախկին անտառպետության հողերում, «Կանադական թաղամաս» կառուցելու հարցում Երևանի քաղաքապետարանին խոչընդոտում էր տեղի բնակչության համախմբված ու հետևողական գործունեությունը: Նրանք իմանալով, որ կառուցող կազմակերպությունը նաև շինարարության թույլտվություն չունի ավելի քան մեկ տարի շարունակաբար կանխում էին անտառտարածքի ոչնչացումը: Սակայն, 2004թ. փետրվարի 23-27-ին 10 ոստիկանների աջակցությամբ կառուցող կազմակերպությունը ոչնչացրել է մոտ երեք հազար ծառ և ավերել հողածածկույթը: Հայաստանի կանաչների միությունը, որի անդամներից ականատեսներ են եղել, 2004թ. փետրվարի 27-ին դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով կասեցնել այդ ապօրինի գործընթացը, բացահայտել և պատասխանատվության կանչել մեղավորներին, ինչպես նաև վերականգնել բնակչության իրավունքները: Դիմումում նշված է, որ ապօրինի գործողությունը կատարվում է ոստիկանների աջակցությամբ, որոնք թույլ չեն տալիս անգամ ՁԼՍ ներկայացուցիչներին մոտենալ ավերվող տարածքին:

Պատասխանում (N 5-205-03, 19.03.2004թ.) մասնավորապես ասվում է. «ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր գրության կապակցությամբ պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ստուգվել է «Հաղթանակ» զբոսայգու և Կ. Ուլենցու փողոցներին հարող տարածքում կատարվող շինարարական աշխատանքների օրինականությունը: ... Նկատի ունենալով, որ «Հ.Ռ.Ա.Ա.Ա.» ՍՊԸ-ի կողմից շինարարություն կատարելու համար տարածքի հարթեցման և մյուս նախապատրաստման աշխատանքները սկսվել են առանց թաղապետարանի համապատասխան թույլտվության, ինչպես նաև առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության, ընկերության տնօրեն Ա. Կետիկյանը նախազգուշացվել է օրենքի խախտման անթույլատրելիության մասին և պարտավորեցվել մինչև բնապահպանական փորձաքննության դրական եզրակացություն և թաղապետարանի թույլտվություն ստանալը չիրականացնել շինարարական աշխատանքները»:

Ժամկետները դեռ չեն լրացել: Վարձակալներից կան ընտանիքներ, որոնց այդ հողը տրամադրվել է որպես Արցախի ազատագրման համար զոհված ազատամարտիկների ընտանիքներ: Բոլոր վարձակալներն էլ ժամանակին կատարել են հողի վճարները, իրենց հողերում իրականացրել են հսկայական աշխատանքներ՝ աճեցրել են մոտ 600 պտղատու ծառեր և մոտ 2200 խաղողի վազեր, որոնք այսօր ոչնչացման վտանգի առջև են կանգնած ի շնորհիվ նախկին քաղաքապետ Ռ. Նազարյանի 23.06.003թ. նո. 1348-Ա ապօրինի որոշման: ... փոխանակ հողահատկացում կատարի այն տարածքից, որը վայրի անմշակ հող է և գտնվում է մեր հողերից մոտ 1 կմ. հեռավորության վրա, հատկացրել է կանոնավոր այգիներից: Ինչու է «Ռենկո Արմէստեյտ»- Ս.Պ.Ը.-ին հատկացրել այն տարածքը, որը մենք տառապանքով մաքրել ենք քարերից, ծառեր ենք տնկել, ստեղծել ենք կանոնավոր այգի, որպեսզի բերք ստանանք և ապահովենք մեր գոյությունը»:



Կատարելով Երևանի քաղաքապետ Ե. Չախարյանի և գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանի հերթական պահանջը և նույնիսկ չհարցնելով ՀՀ բնապահպանության նախարարության և այդ խնդրում պետականորեն հատուկ լիազորված մյուս մարմինների կարծիքը ՀՀ կառավարությունը Դալմայի այգիների տարածքից հողհատկացման և հողի կարգավիճակի փոփոխման որոշում է կայացնում: Այսպես, 2003թ. սեպտեմբերի 11-ին ընդունում է N 1281-Ա որոշումը. «ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ և 76-դ հոդվածի 5-րդ մասերին համապատասխան ՀՀ կառավարությունը որոշում է՝ 1. Երևանի Սալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից առանձնացնել Արարատյան բնակելի զանգվածով, «Նոյ» թաղամասով, նախագծային փողոցով պարփակված տարածքում գտնվող 5,0 հեկտար մակերես ունեցող հողամասը և այն ընդգրկել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի դասակարգման մեջ: 2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Արարատյան բնակելի զանգվածով, «Նոյ» թաղամասով, նախագծային փողոցով պարփակված տարածքում գտնվող՝ 5.0 հեկտար մակերես ունեցող հողամասն առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրել «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ՝ վարձակալական իրավունքի կամ օրենքով սահմանված կարգով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման դեպքում հետագա աճուրդային վաճառք կազմակերպելու համար՝ սահմանելով մեկ քառ. մետր հողամասի մեկնարկային գինը՝ քսան ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամից ոչ պակաս»:

Տեսնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում այն հոդվածները, որոնց համապատասխան ընդունվել է 1281-Ա որոշումը:

Արդեն ասվել է, որ 7-րդ հոդվածի 2-րդ մասում («Կառավարությունը հողաշինարարական ու քաղաքաշինական փաստաթղթերի, պետական հաշվառման տվյալների հիման վրա սահմանում եւ փոփոխում է հողերի նպատակային նշանակությունը»), այլ դրույթ է, որը և խախտել է ՀՀ կառավարությունը՝ կայացնելով N 1281-Ա որոշումը, քանզի այն ընդունվել է առանց պահանջվող հիմքերի՝ ոլորտի պետականորեն հատուկ լիազորված մարմինների համաձայնության: Դրա հետ մեկտեղ գյուղատնտեսական բարձրակարգ հողերի նպատակային նշանակության փոփոխումը կատարվել է անհատական որոշմամբ, որը ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ իրավական նորմատիվային փաստաթուղթ չի համարվում (հոդված 38-րդ, մաս 3-րդ. «Անհատական իրավական ակտի նշումով ընդունված իրավական ակտերի՝ նորմատիվ բնույթ ունեցող դրույթներն իրավաբանական ուժ չունեն»): Ինչպես նաև՝ ըստ նույն օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի. «Օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն)»: Իսկ 52-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է. «ՀՀ կառավարության՝ օրենքի ուժ ունեցող որոշումները, ինչպես նաև ՀՀ նորմատիվ որոշումները ենթակա են պարտադիր պաշտոնական հրապարակման»):

Այսպիսով, օրենքի տեսանկյունից նշված որոշումը իրավական ուժ չունի կամ չպետք է ունենա:

Ինչ վերաբերում է 76-րդ հոդվածին («Հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրման դեպքերը սահմանում է կառավարությունը») ապա, նշված տարածքները վարձակալության է հանձնված, և դրանց վարձակալության ժամկետները սպառվում են 2004-2006թթ.: Հետևաբար, Կառավարությունը մինչ «հողամասն առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրելը», պետք է լուծեր այդ նույն հողատարածքի վարձակալների հարցը, ինչը չի արել: Ընդունված որոշմամբ, փաստորեն, անտեսվել են վարձակալները, հետևաբար և ոտնահարվել են նրանց իրավունքներն ու արժանապատվությունը:

Այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ քննարկվող որոշման նախագիծը կազմելու ՌԳ կառավարությունն է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը:

Իր հերթին, Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը կայացնում է N 2321-Ա (01.12.2003թ.) որոշումը. «*Ի կատարումն ՌԳ կառավարության 2003թ. սեպտեմբերի 11-ի «Յոթերի նպատակային նշանակության փոփոխության և «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ին հողամաս տրամադրելու մասին» հ. 1281-Ա որոշման, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 27.11.2003թ. հ. 18-11/6736 եզրակացությունը և այն, որ նշված հողամասը համապատասխանում է ՌԳ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի և 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերով սահմանված պահանջներին, ինչպես նաև ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում.*

1. *Ղեկավարվելով ՌԳ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» հ.714 որոշմամբ հաստատված կարգի 44 կետի «գ» ենթակետով Արարատյան բնակելի զանգվածով, «Նոյ» թաղամասով, նախագծային փողոցով պարփակված տարածքում գտնվող 5,0 հա մակերեսով հողամասն առանց մրցույթի, վարձակալությամբ, գնման նախապատվության և աճուրդային վաճառք կազմակերպելու իրավունքով, 50 տարի ժամկետով տրամադրել «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ին (հետագայում՝ հողօգտագործող): ...»:*

Այս որոշման հիմք հանդիսացող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Ս. Դանիելյանի ստորագրությամբ եզրակացությունը (27.11.2003թ. հ. 18-11/6736)՝ ուղղված Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանին հետևյալն է. «*Ի կատարումն ՌԳ կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի «Յոթերի նպատակային նշանակության փոփոխության և «Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերությանը հողամաս տրամադրելու մասին» հ. 1281-Ա որոշման՝ վարչության կողմից պատրաստվել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ, Արարատյան բնակելի զանգվածով, «Նոյ» թաղամասով, նախագծային փողոցով պարփակված տարածքում գտնվող՝ 5.0 հա մակերեսով հողամասն առանց մրցույթի, վարձակալությամբ, գնման նախապատվության և աճուրդային վաճառք կազմակերպելու իրավունքով 50 տարի ժամկետով «Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրելու մասին:*

*Նշված 5.0 հա մակերեսով հողամասը համապատասխանում է ՌԳ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: Կից ներկայացնում ենք Երևանի քաղաքապետի որոշման նախագիծը»:*

Տեսնենք, թե ինչքանով է «*նշված 5.0 հա մակերեսով հողամասը համապատասխանում ՌԳ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում*» միտքը համապատասխանում իրականությանը:

Այսպես, ՌԳ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածում կարդում ենք. «*2. Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող և քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման (մինչև դրա ժամկետի լրանալը) իրավունքով գտնվող հողամասերը չեն կարող օտարվել այլ անձի, եթե սահմանված կարգով չի լուծվել պայմանագիրը*», այն դեպքում, երբ «*Հայկական ավիաուղիներ*»-ին հատկացված հողամասը երկար տարիներ է, ինչ վարձակալության է տրված քաղաքացիներին. նրանց վարձակալական պայմանագրերի ժամկետները նույնիսկ այսօր՝ այդ եզրակացությունը ներկայացնելուց յոթ ամիս անց, դեռ սպառված չեն:

Ակնառու է օրենքին կատարած հղման շինծու և կամայական լինելը և իրական պատկերը կեղծ ներկայացնելը: Ինչպիսի հանդգնություն ու անպատկառություն:

Ինչ վերաբերում է 64-րդ հոդվածին (64, 2. «Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողակտորի փաստացի ավելի օգտագործման դեպքում նշված հողատարածության նկատմամբ ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը, եթե՝ 1. համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայով կամ բնակավայրի գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար. 2. **հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը.** 3. հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցություն, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, **հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում**».), ապա այստեղ անհամապատասխանությունը նույնպես բացահայտ է:

Նաև այն, որ իբրև «Հայկական ավիաուղիներին» հատկացված 5 հեկտար հողատարածքը «ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում», նույնպես չի համապատասխանում իրականությանը: ՀՀ հողային օրենսգրքի այդ հոդվածը սահմանում է. «Արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝ 1) պատմական և մշակութային արժեքների օբյեկտներ են. 13) վիճելի տարածքներ են՝ մինչև վեճերի լուծումը»:

Ինչպես տեսնում ենք, Երևանի քաղաքապետի N 2321-Ա որոշման հիմք հանդիսացող եզրակացությունը պարունակում է կեղծ փաստեր, հետևաբար և դրա հիմքով ընդունված որոշումը չի կարող օրինական համարվել:

Դալմայի այգիներին վերաբերող փաստաթղթերի համադրությունից պարզորոշ երևում է, որ այդ հողատարածքը քաղաքաշինական նպատակով օգտագործելու գլխավոր ջատագովը Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանն է: Այդ խնդրում նրան ակնհայտորեն աջակցում են իր իսկ ենթակայության տակ գտնվող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության ծառայողները: Օրինակ, ինչպես տեսնում ենք, այդ վարչության պետի ստորագրությամբ կեղծ եզրակացությունը հիմք է ծառայել քաղաքապետարանի և ՀՀ կառավարության որոշումների համար:

«Հայկական ավիաուղիները» կարճագույն ժամանակահատվածում իրեն վարձակալության նպատակով հատկացված հողամասի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերում: Իսկ «Միկա-Լիմիթեդ» ՓԲԸ 2004թ. հունվարի 21-ին իր ընդհանուր ժողովի արձանագրությամբ «Հայկական ավիաուղիներ»-ից աճուրդով գնել է այդ 5 հեկտար հողատարածքը և 2004թ. մայիսի 25-ին այն գրավ է դրել «Հայխնայբանկում»: Ըստ տեղեկությունների, վերջինիս բաժնետոմսերի 70%-ը պատկանում է ռուսաստանյան «Վնեշտորգ» մասնավոր բանկին:

Ահա, թե ինչ աղետալի հետևանքներ ունեցան «գործարար միջավայրի հստակեցման, կարգավորման և պարզեցման» քաղաքականությունը և նմանատիպ այլ միջոցառումները: Կարելի է ասել, որ այդպիսի գործելակերպն արդեն կաթվածահարել է, օրինակ, ՀՀ քաղաքաշինության պետական համակարգը: Փաստորեն, մեր Երկիրը վերածվում է «բաց դռների» երկրի:

«Հայկական ավիաուղիներին» տրված 5 հեկտար հողատարածքի 1,27 հեկտարը 1991 թվականից վարձակալության է հանձնված հինգ վարձակալների, որոնց վարձակալական պայմանագրերի ժամկետները սպառվելու են 2004-2006թթ.: Նշված 1,27 հեկտարում այժմ կա՝ խաղողի վազ- 700, սալորենի- 250, տանձենի- 14, խնձորենի- 60, դեղձենի- 27, ծիրանենի- 20, ընկուզենի- 16, բալենի- 110, կեռասենի- 12, թթենի- 15, նռնենի- 23, սերկևիլենի- 25, նշենի- 3, թզենի- 7, ինչպես նաև մասրենու, ալոճի, հաղարջի, մոշի բազմաթիվ թփեր, ավելի քան 250 ոչ մրգատու ծառեր:

Հինգ վարձակալների հանձնված այդ տարածքը (Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանի N 2321-Ա որոշումից այն տպավորությունն է ստեղծվում, որ իբր նշված տարածքը վարձակալության տրված չէ)՝ վարձակալների ջանքերի շնորհիվ, նախ համարյա գերծ է մնացել ապօրինի ծառահատումներից և ապա, մեծացել է մշակովի հողատարածքը: Եթե 1991թ. կնքված պայմանագրերով տարածքում մշակովի էր համարվում 0,81 հեկտար, ապա 1994թ. պայմանագրերով այն արդեն դարձել է 1,27 հեկտար: Դալմայի այգիների հյուսիս-արևմտյան հատվածում այդ հողակտորը, թերևս, ամենածառածածկներից մեկն է: Զարմանալի է, որ դրան կից համարյա չմշակվող տարածքը չի ներառվել կառուցապատման նպատակով օտարված հողերում: Նպատակը պարզ է: Սկզբից ոչնչացնել ծաղկուն այգին, իսկ վատ մշակվածի և անապատ տարածքի հարցը արդեն դժվար չի լինի «լուծել», այսինքն՝ աճուրդի հանել-կառուցապատել:

Մարդիկ օրինական ճանապարհով քրտնաջանորեն այգիներ են հիմնում, իսկ ՀՀ կառավարությունը, իհարկե ՀՀ նախագահի հաստատմամբ, խախտելով ՀՀ բազմաթիվ օրենքներ, այդ թվում՝ առանց վարձակալներին տեղյակ պահելու, այդ տարածքները հանձնում են ուրիշներին: Օրինակ, ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. *«Պետության կամ համայնքների սեփականությանը պատկանող եւ քաղաքացիների ու իրավաբանական անձանց մոտ օգտագործման (մինչեւ դրա ժամկետի լրանալը) իրավունքով զտնվող հողամասերը չեն կարող օտարվել այլ անձի, եթե սահմանված կարգով չի լուծվել պայմանագիրը»:*

«Հայկական ավիաուղիներին» հատկացված տարածքի վարձակալները դիմել են (14.03.2004թ.) ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության ղեկավար Վ. Բարսեղյանին. *«Շահումյանի անվան կոլտնտեսության լուծարումից հետո, տնտեսության անդամներին հատկացրեցին հողատարածքներ: Հողամասերը սկզբից որոշվեց սեփականության հիմունքներով հատկացնել, այնուհետև կատեցվեց այդ որոշումը և հողամասերը հատկացվեցին վարձակալական հիմունքներով: Մեր հետ կնքվեցին վարձակալական պայմանագրեր 1991-1996 և 1996-2006թ.: Հողերի վրա կատարվեցին բազում տանջալից աշխատանքներ, պայքար ծառահատումների դեմ, կատարվեց այգիների թարմացում, վերականգնում, տնկվեցին նոր ծառատեսակներ, խաղողի վազեր, կատարվեց երկրագործի դաժան, դժվարին աշխատանք՝ հողերը բերրի դարձնելու նպատակով: Աշխատանքը տվեց իր պտուղները, ժամանակն էր բերքից օգտվելու, սակայն ստացվեց ՀՀ կառավարության չարագուշակ, իրավական հիմքերից զուրկ N 1281-Ա որոշումը 11.09.2003 թ., որը հակասում էր ՀՀ գործող օրենսդրությանը՝ օրինակ, ՀՀ հողային օրենսգրքի 48 հոդվածի 3-րդ, 62-2-րդ, 72-1-րդ, 94-2-րդ կետերին և այլ օրենսդրական ակտերին: Վերոնշյալ որոշմամբ մեր կողմից (մոտ 40 վարձակալներ) մշակվող հողատարածքները, տրամադրվել են «Հայկական Ավիաուղիներ» ՓԲԸ-ին 5 (հինգ) հեկտար ընդհանուր տարածքով: Ուստի խնդրում ենք Ձեր միջնորդությունը մեր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով: Կից ներկայացնում ենք վարձակալական պայմանագրերի (մի մասի) և կառավարության որոշման պատճենները»:*

ՀՀ նախագահի վերահսկողության ծառայությունը հարցին բանական լուծում տալու փոխարեն այդ դիմումը ուղարկում է Երևանի քաղաքապետին, ճիշտ այնտեղ, որտեղ մշակվում և շրջանառության մեջ է դրվում Դալմայի այգիների ոչնչացման ծրագիրը:

Այդպիսի ճակատագրի են արժանացել նաև Դալմայի այգիների խնդիրը տարբեր մակարդակներում լրջորեն քննարկելու և միայն դրանից հետո որոշումներ կայացնելու Հայաստանի կանաչների միության՝ ՀՀ նախագահին հղած առաջարկություններն ու դիմում-բողոքները: Բացի դիմումներին անմիջական պատասխան չտալուց, ՀՀ նախագահը նաև չի արձագանքում միության ներկայացուցիչների հետ հանդիպելու և Դալմայի այգիների հետ կապված մեր տեսակետը լսելու առաջարկություններին:

Քար լռություն: Այն տպավորություն է ստեղծվում, որ նախագահը, հավանաբար, չի ցանկանում գրավոր փաստաթղթեր թողնել, որ ինքը մասնակից է եղել Դալմայի այգիների ոչնչացման գործին: Ավելին, նախագահական համակարգի որոշ պաշտոնյաներ առանձին հանդիպումներում փորձում են համոզել, որ նախագահին քաղաքապետարանը սխալ տեղեկությամբ մոլորեցրել է և նա տեղյակ չէ, որ Դալմայի այգիները ոչնչացվելու են:

Պատասխանելով վերը բերված դիմումին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Կ. Դավթյանը գրում է (21.04.2004թ., N 01/20-Կ-306). «ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարին հասցեագրված կոլեկտիվ դիմումի կապակցությամբ հայտնում ենք, որ նախկին շրջգործկոմների, ինչպես նաև քաղաքապետարանների հետ կնքված հողամասի վարձակալության պայմանագրերը հիմք չեն կարող հանդիսանալ Դալմայի այգիներում գտնվող հողամասերի ձեզ հետ պայմանագրեր կնքելու համար, քանի որ դրանք նոտարական կարգով վավերացված չեն և պետական գրանցում չունեն: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ պայմանագրերը կնքվել են օրենսդրության պահանջների խախտմամբ, դրանք կնքման պահից համարվում են առոչինչ գործարքներ և իրավաբանական հետևանքներ ունենալ չեն կարող: Ելնելով վերոհիշյալից Ձեր խնդրանքը քավարարելու հնարավորություններ չկան:

Միաժամանակ տեղյակ է պահվում, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 27-ի «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» հ. 1941-Ա որոշմամբ հաստատվել է Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանները: Նշված որոշմամբ Երևանի քաղաքապետին հանձնարարվել է ներկայացնել առաջարկություններ նշված հողերին հարակից՝ Աթենքի, Լենինգրադյան, Սերաստիա փողոցներին և Ծովակալ Իսակովի պողոտային հարող հողամասերի նպատակային նշանակության փոփոխության և տարածքային գոտևորման վերաբերյալ:

Ներկայումս այդ տարածքներում իրականացվում են հողօգտագործողների հաշվառման աշխատանքներ, որոնց ավարտից հետո սահմանված կարգով կքննարկվի և կորոշվի Ձեր, ինչպես նաև նմանատիպ հարցերի հետագա ընթացքը»:

Ինչպես տեսնում ենք, պետության հետ կնքած պայմանագրերը համարում են ոչ օրինական, իսկ վարձակալներին՝ ապօրինի գործողություն կատարողներ: Այստեղ անտեսված են նաև ՀՀ հողային օրենսգրքի որոշ դրույթներ (հոդված 52-4 . «Մինչև 1999 թվականի մայիսի 6-ը հողամասերի նկատմամբ իրավունքների վերաբերյալ սահմանված կարգով տրված, ձեռք բերված փաստաթղթերն ունեն իրավաբանական ուժ, վերագրանցման ենթակա չեն և հիմք են հանդիսանում անշարժ գույքի նկատմամբ գործարքներ կատարելու համար»: Հոդված 51. «Հողամասերի նկատմամբ քաղաքացիների եւ իրավաբանական անձանց իրավունքները, ինչպես նաև հողամասերի նկատմամբ օգտագործման իրավունքների սահմանափակումները ծագում են՝ 1) պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներից եւ նրանց հետ կնքած պայմանագրերից»):

Հանրապետության նախարարների խորհրդի և կառավարության որոշումներին համապատասխան կնքված պայմանագրերը «կնքման պահից առոչինչ գործարքներ»

համարողներն արդյոք նկատող են, որ դրանով նրանք առռչինչ են համարում նաև մեր երկրի գերագույն գործադիր մարմնի որոշումները:

Ահա և ՀՀ նախագահական համակարգի՝ «ժողովրդի և պետության շահերից բխող» գործունեությունը:

Սակայն, Դալմայի այգիներն ամբողջությամբ բնաջնջելը կանխորոշում է ՀՀ Կառավարության 2003 թվականի մարտի 27-ին ընդունած «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» N 1941-Ա որոշումը. «ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան ՀՀ կառավարությունը որոշում է .

1. Հաստատել Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանները համաձայն հավելվածի, և այդ սահմաններում ընդգրկված 256.0 հեկտար մակերես ունեցող գյուղատնտեսական նշանակության հողերը տեղափոխել անտառային հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ ա) երկամսյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողերի սահմանների նկարագրի կազմումը և դրանց նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում: բ) մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված հողերին հարակից Աթենքի, Լենինգրադյան, Սերաստիա փողոցներին և Ծովակալ Իսակովի պողոտային հարող հողամասերի նպատակային նշանակության փոփոխության և տարածքների գոտևորման վերաբերյալ առաջարկություն:

3. ՀՀ գյուղատնտեսության նախարարին եռամսյա ժամկետում՝ ՀՀ բնապահպանության նախարարի, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի և Երևանի քաղաքապետի հետ համատեղ՝ ոլորտի հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ քննարկել և առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարություն Դալմայի այգիներում անտառի հիմնման ու պահպանման միջոցների վերաբերյալ»:

Այս որոշումը թերի է և ոչ հիմնավորված: Այն ընթերցելիս առկախվում են նաև բազմաթիվ հարցեր.

1. Անհասկանալի է, թե ինչո՞ւ տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական մեծ արժեք ներկայացնող և հասարակական հնչեղություն ունեցող քաղաքաշինական այդպիսի ծավալուն ծրագրի վերաբերյալ որոշումը կայացվում է «անհատական» կարգավիճակով, այսինքն՝ պաշտոնական մամուլում այն չի հրապարակվում և ինչպես արդեն ասվել է, իրավական նորմատիվ փաստաթղթի ուժ չունի:

2. Ինչո՞ւ է պահպանման ենթակա համարվում տարածքի միայն 256 (բացահայտ կամայական թիվ, օրինակ, ինո՞ւ 256, այլ ոչ թե, ասենք՝ 200 կամ 400) հեկտարը, երբ Դալմայի այգիների տարածքը, ըստ փաստաթղթերի, 533 հեկտար է, իսկ պահպանման ընդհանուր տարածքը 780 հեկտար , և, մեր ունեցած տվյալներով, 256 հեկտար «հողերին հարակից» տարածքը, որը կառուցապատման տակ է դրվելու, որպես մշակովի հող իր արժեքով ոչ միայն չի զիջում «պահպանվելիքին», այլ նույնիսկ, առանձին դեպքերում գերագանցում է դրան:

3. Ինչքանո՞վ է նպատակահարմար և հիմնավորված նշված 256 հեկտար գյուղատնտեսական նշանակության կուլտուր-ոռոգելի հողերում անտառ հիմնելը: Լսված թան է, որ այգիներ ոչնչացնելով անտառ հիմնեն, այն էլ առանց գիտական վերլուծությունների ու քննարկումների:

4. Այգու տարածքի 256 հեկտարը ինչո՞ւ է ներկայացվում որպես պահպանվելիք տարածք, երբ այդտեղ կառուցվելու է արագընթաց մայրուղի (դա լինելու է մեր երկրի առաջին վճարովի ճանապարհը), այլ կարգի ճանապարհների ցանց և շինություններ: Իրականում, այդ տարածքը դառնալու է նաև տրանսպորտային

հանգույց և ինչպես հայտնի է, նման վայրերում անթույլատրելի է գյուղատնտեսական մթերքների և մշակաբույսերի արտադրությունը:

Նշված 256 հեկտար տարածքի «պահպանության» նրբորեն մշակված ծրագիրը բացահայտ կեղծիք է և սովորական ծխածածկույթ՝ Դալմայի այգիների ամբողջովին ավերում-ոչնչացումը իրականացնելու գործում: Հասկանալի է, որ կեղծ տեղեկատվության պատճառով (դժբախտաբար, երբեմն դրանք հնչում են ամենաբարձր պաշտոնյաների շուրթերից) այգիների պահպանությամբ ոգևորված ու միմյանց շնորհավորող քաղաքացիները մինչև հասկանան, որ խաբված են, այդ ժամանակ, հավանաբար, իրենց պաշտոններում չեն լինի տվյալ ապագային նախագիծն իրականացնողներն ու նրանց հովանավորները, իսկ արդեն կառուցված առանձնատներին, դիվանագիտական համալիրներին, գործարաններին անգամ մոտենալու իրավունք չեն ունենա:

Ինչ վերաբերում է այսպես կոչված «գոտևորմամբ» Դալմայի այգիների «պահպանմանը», ապա անհրաժեշտ է նշել, որ այժմ, Դալմայի այգիները բոլոր կողմերով, բացառությամբ հարավ-արևմտյանից, մայրուղիներով ու վայրի բնությամբ երիզված-սահմանազատված են բնակելի տարածքներից, իսկ «գոտևորման» ծրագիրը իրականացնելուց հետո «պահպանվելիք» 256 հեկտարը արդեն ամբողջությամբ կհայտնվի շինությունների օղակում: Մեկ անգամ ևս պետք է ասվի, որ նշված 256 հեկտարը նույնպես չի պահպանվելու: Ջարգացումները ցույց են տալիս, որ 4-5 տարի հետո կսկսվի նաև այդ տարածքի աճուրդ-վաճառքը՝ կառուցապատումը:

Կառավարության N 1941-Ա որոշումը կայացնելուց ավելի քան մեկ տարի անց, հավանաբար, երբ միայն նկատել են դրա թերի լինելը, 2004թ. մարտի 31-ին ընդունել են ՀՀ կառավարության N 397- Ա որոշումը. *«ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ՀՀ կառավարությունը որոշում է. Հաստատել Երևանի Աթենքի, Լենինգրադյան, Սերաստիա փողոցներին և Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքների գոտևորման սխեման և դրան համապատասխան փոխել նշված հողերի նպատակային նշանակությունը (կատեգորիա)՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների»:*

Երևի է, այստեղ Դալմայի այգիները չեն հիշատակվում, սակայն նկարագրված տարածքը համապատասխանում է այդ այգիներին: Փաստորեն, 397- Ա որոշումը 1941-Ա որոշման մաս է կազմում:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 1941-Ա ճակատագրական որոշումը կայացնելուց 20 օր առաջ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ևս մեկ անգամ վերահաստատեց իր դիրքորոշումը՝ Դալմայի այգիների պահպանության խնդրում: Երևանի քաղաքապետի տեղակալ, գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանին ուղղված ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Ս. Ավետիսյանի ստորագրությամբ նամակում ( 07.03.2003թ., N 07. ՍԱ-10-245) մասնավորապես ասվում է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ուսումնասիրելով *«Ձեր կողմից ներկայացված «Դալմայի այգիներ» տարածքից 10 հեկտար, որից սկզբնական փուլում 5 հեկտար հողատարածություն գործարանի կառուցման նպատակով հատկացնելու վերաբերյալ խնդիրը հայտնում է, որ «Դալմայի այգիների» հողերը դասվում են բնապահպանական նշանակության հողերի շարքին, որոնց վրա արգելվում է շինարարական և նպատակային օգտագործմանը հակասող ամեն մի գործողություն և տվել է իր բացասական կարծիքը «Դալմայի այգիների» գոտևորման սխեմայի վերաբերյալ: Գործարանի կառուցման նպատակով առաջարկվող տարածքը ոչ միայն գտնվում է «Դալմայի այգիների» առանցքային մասում, այլև զբաղեցված է խաղողի և պտղատու այգիներով, ուստի նախարարությունը գտնում է ոչ նպատակահարմար այդ տարածքը շինարարական կարիքների համար տրամադրելու»:*

ՀՀ վարչապետը 1941-Ա որոշումը ստորագրել է կառավարության կողմից ընդունվելուց ուղիղ մեկ տարի անց՝ 2004թ. մարտի 27-ին, որից երկու օր անց էլ

վավերացրել է ՀՀ նախագահը: Այսպիսով, Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Սարգսյանը տարիներ անց հասավ ծրագրած իր նպատակին: Հասկանալի է, որ այդ գործում նրա համախոհներն են եղել քաղաքապետի պաշտոն զբաղեցնողները, իսկ ըստ մեզ հասած տեղեկությունների՝ գլխավոր ճարտարապետի այդ հարցում հովանավորն ու ոգևորողը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն է:

2004թ. մարտին Դալմայի այգիների «գոտևորման», իմա՝ բնաջնջման որոշումը (1941-Ա) ՀՀ վարչապետի, ապա և նախագահի կողմից ստորագրվելուց հետո ոլորտի պետականորեն հատուկ լիազորված մարմինների ղեկավարներին տրված էր ընտրություն կատարելու թերևս հետևյալ տարբերակը՝ կամ հրաժարվել այգիների պահպանության գաղափարից և մնալ զբաղեցրած պաշտոններում, կամ էլ Դալմայի այգիների խնդրում շարունակել պաշտպանել իրենց որդեգրած դիրքորոշումը, սակայն կորցնել պաշտոնները:

ՀՀ Գերագույն գործադիր մարմնի՝ կառավարության վարչահրամայական եղանակով ընդունած 1941-Ա որոշումը, ինչպես արդեն ասվել է, չէր կարող չունենալ իր ճգնիչ ազդեցությունը: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ կառավարության և նախագահի հանձնարարականով կազմել է թիվ 1941-Ա որոշումից բխող՝ «Երևանի «Դալմայի այգիներ» պատմամշակութային համալիրի ստեղծման ծրագրի կոնցեպցիա»-ն (21.06.2004թ., N 07-ՍԱ-02-1455):

*ԵՐԵՎԱՆԻ «ԴԱԼՄԱՅԻ ԱՅԳԻՆԵՐ» ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿՈՆՑԵՊՏԻԱՆ*

Այս փաստաթղթի ընթերցումը տխուր պատկեր է ստեղծում: Այն ընթերցողին տեղափոխում է զավեշտի և երևակայության աշխարհ: Ջարմանք է հարուցում՝ ինչպես կարող էր այսպիսի ցածրորակ, գիտական հիմնավորումից զուրկ փաստաթուղթը ստեղծվել ու շրջանառության մեջ դրվել պետական գերատեսչության կողմից:

Նշված Ծրագրի «Ներկայիս իրավիճակը» ենթավերնագրի տակ ընթերցողը պետք է որ տեղեկություններ ստանար Դալմայի այգիների հողատեսակների, բուսատեսակների, վարձակալական պայմանագրերի և ընդհանրապես՝ այգու գույքագրման արդյունքների մասին: Սակայն այդտեղ նման բան չկա: Ծրագիր կոչվածում մակերեսորեն ու անկապ, այսպես կոչված, տեղեկություն է տրվում, օրինակ, որ մեր հանրապետությունում 1930-1995 թվականներին անտառներում և քաղաքամերձ պուրակներում գերհատումներ են կատարվել, կամ՝ «1992-1995 թվականներին Երևանի տարածքում ոչնչացվել է 1300 հա-ից ավել անտառ և պատմական այգետարածքներ»...

Ծրագրի հեղինակները կարծես չեն նկատում, կամ միտումնավոր չեն ցանկանում տեսնել, որ միայն մեկ հարվածով՝ Դալմայի այգիների «գոտևորման» ծրագրով, ոչնչացվելու է և մասամբ էլ իր ֆունկցիան կորցնելու է 780 հեկտար կանաչ տարածք (Երևան քաղաքի ամեն մի բնակչի հաշվով ավելի քան 7 քառ. մետր):

Այդ բաժնի նկարագրությունը ավարտվում է շինծու և մոլորեցնող հետևյալ եզրակացությամբ. «Երևանում կանաչ գոտիների և զբոսայգիների հիմնումն ունի ինչպես բնապահպանական, առողջարարական և ռեկրեացիոն, այնպես էլ պատմամշակութային նշանակություն»:

Հարց է առաջանում: Եթե Ծրագրի հեղինակներին հայտնի է կանաչ գոտիների նշանակությունը, ապա ինչո՞ւ են նախատեսում՝ պատմամշակութային, գյուղատնտեսական և բնապահպանական մեծագույն արժեք ներկայացնող հսկայածավալ կանաչ գոտու ոչնչացումը:

Ինչպիսի անպատկառություն: Ոչնչացվում է բազմապիսի և մեծագույն արժեք ներկայացնող 780 հեկտար կանաչ տարածք, սակայն դա ներկայացվում է որպես կանաչ տարածքների հիմնում:



Հավանաբար, Ծրագրի հեղինակները ոչնչացնելը շփոթում են ստեղծելու հետ, ճիշտ այնպես, ինչպես երջանակահիշատակ Երվանդ Օտյանի ավերման բնագոյով օժտված բացասական հերոսը՝ իր վաղ մանկության տարիներին և ընդհանրապես:

**«Ծրագրի կոնցեպցիայի հիմնավորումը»** հետևյալն է. *«Ներկայիս ստեղծված իրավիճակը պահանջում է հաշվի առնելով անցյալի ժառանգությունը, երկրում ստեղծված կտրուկ անկումային էկոլոգիական վիճակը, Երևան քաղաքի մթնոլորտային էկոհաշփվելու և բնակչության առողջության, քաղաքամերձ անտառային տնտեսությունների, պատմամշակութային արժեքների վերականգնման անհրաժեշտությունը, ինչպես նաև զբոսայգիների հիմնման նպատակով, իրականացնել դրանց բարելավմանը ուղղված անհետաձգելի առաջարկներ և ծրագրեր:*

*ՀՀ կանաչ գոտիների վերականգնումն ու զարգացումը, զբոսայգիների հիմնումը բխում է նաև Անապատացման դեմ պայքարի, Կենսաբազմազանության, Կլիմայի փոփոխության մասին և մի շարք այլ միջազգային կոնվենցիաների դրույթներից»:*

Ինչպես տեսնում ենք, «հիմնավորում» կոչվածը՝ վերացական, երևակայական բառակույտ է: Այդտեղ ընդհանրապես որևէ հիմնավորում չկա, իսկ շարադրանքը «թռչնի լեզվով» է գրված, ինչպես և ամբողջ Ծրագիրը: Գուցե և դա արված է հավանական ընդդիմախոսներին թյուրիմացության ու մոլորության մեջ զցելու համար, կամ ուղղակի ցանկանում են նաև ծաղր ու ծանակի ենթարկել մեր իշխանական համակարգը:

Եվ ինչպիսի հանդգնություն: Անցյալի եզակի ժառանգություն հանդիսացող, պատմամշակութային և էկոլոգիական առումներով մեծագույն արժեք ներկայացնող Դալմայի այգիների ոչնչացումը ներկայացվում է որպես պատմամշակութային արժեքների վերականգնման և Երևան քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավմանն ուղղված գործողություն:

Ինչ վերաբերում է վերջին պարբերությանը, ապա այն նույնպես բացահայտ կեղծիք է, քանզի Դալմայի այգիների գոտևորման ծրագիրը ոչ միայն չի բխում թվարկված կոնվենցիաների դրույթներից, այլ հակառակը, ամբողջովին հակասում է դրանց:

Պակաս անհեթեթություն ու կեղծիք չէ քննարկվող ծրագրի **«Կոնցեպցիայի հիմնական նպատակներն ու ակնկալիքները»** բաժինը. *«Հաշվի առնելով էթնոմշակութային, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև բնապահպան և քաղաքի բնակչության առողջարարական առաջնությունները ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի N1941-Ա «Երևանի Դալմայի այգիների պահպանման ենթակա հողերի սահմանների և նպատակային նշանակության փոփոխության մասին» որոշումով 256 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերը տեղափոխվել է անտառային հողերի կատեգորիա, և ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի կողմից հանձնարարվել ՀՀ գյուղատնտեսության նախարարին, շահագրգիռ նախարարությունների ու հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ առաջարկություն ներկայացնել Երևան քաղաքի Դալմայի այգիներում պահպանելով հնագիտական, պատմամշակութային և բնապահպանական բազմաֆունցիոնալ նշանակությունը, ինչպես նաև անցյալ դարից աճեցված և մինչև օրս պահպանված ծառատեսակները պատմամշակութային համալիրի հիմնման միջոցով ռեկրեացիոն, մարդկանց առողջության համար բարենպաստ պայմանների և մայրաքաղաքի զեղեցիկ բնապատկերի (լանդշաֆտի) ապահովման առումով ներկայացնել ծրագրի կոնցեպցիա, որի արդյունքում հնարավոր կլինի Դալմայի այգիներում ձևավորել պատմամշակութային համալիր, որը կունենա գիտական, բնապահպանական, երկրագործական մշակութային ներկայացման նշանակություն և հետաքրքրություն կներկայացնի հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման տեսանկյունից»:*

Նախ, այնպես է ներկայացվում, որ կարծես գյուղատնտեսական նշանակության հողերը անտառային հողերի կատեգորիա տեղափոխելը (առանձին զրույցներում ասվում է, որ իբր դա արվում է, որպեսզի հեշտ լինի քաղաքապետարանի ոտնձգություններից պաշտպանել այդ տարածքը, բայց նրանք չեն ուզում տեսնել, որ

քաղաքապետարանի համար կարծես արգելքներ գոյություն չունեն, օրինակ, «Հաղթանակ» զբոսայգուն հարող անտառածածկ տարածքում կառուցվում է, այսպես կոչված, «Կանադական թաղամաս») բխում է մեր ժողովրդի ու պետության շահերից և ապա, ինչպես արդեն ասվել է ՀՀ կառավարության Դալմայի այգիներին վերաբերող որոշումը և նախագահի հանձնարարականը հիմնավորված չեն և կանայական են: Հետաքրքիր է՝ ինչպե՞ս է հնարավոր կանաչ տարածքը կառուցապատել և մասամբ էլ գործառնական նշանակությունը փոխել և միաժամանակ պահպանել դրա հնագիտական, պատմամշակութային և բնապահպանական բազմաֆունկցիոնալ նշանակությունը: Ուղղակի ցնդաբանություն:

Նույն ոգով է գրված Ծրագրի «Հիմնական խնդիրները և առաջարկվող ուղիները» բաժինը. «1. **Էթնո-մշակութային քաղաղորդիչ**- «Անհրաժեշտությունից ելնելով, առաջին հերթին պետք է անդրադառնալ տվյալ տարածքում պահպանված հին այգիների վերականգնմանը և ազգային ավանդույթների վերականգնմանը. Այսինքն.

-Բարելավել եղած խաղողի և այլ պտղատուների աճի և զարգացման պայմանները, դրանց շուրջ կառուցելով “ԿՈՄԵՐՑԻՈՆ ԿՈՆՑԵՊՏ”, զբոսաշրջիկներին ներգրավելու նպատակով: Սա կնշանակի - անցյալի քաղաղատոմսերի և սննդի մշակույթի հիման վրա վերականգնել տվյալ պտղատուներից պատրաստվող Հայկական ազգային զինիներ, հյութեր, անուշեղենների, ինչպիսիք են **թթու լավաշը** և այլն, և ավանդական ձևերով մատուցել այցելու հաճախորդներին/զբոսաշրջիկներին:

-Տվյալ տարածքում սկսել իրականացնել պատմաազգագրական տոնակատարություններ, 1/2ձժգակցելով ներկայիս Էրեբունի-Երևան քաղաքային շքերթներին: Սա կնշանակի, որ հաշվի առնելով Հայոց Տոնացույցի առատությունը, կարողանալ կազմակերպել գործողությունների այնպիսի մի համալիր, որը կներգրավի պոտենցիալ ներդրողներին ծրագրի սկզբից շահագրգիռ լինել ընդգրկել ազգային պարկի կառուցման/վերականգնման գործում:

-Հայկական ազգային գյուղական ճարտարապետության վերականգնման նպատակով, համալիրի համապատասխան տարածքներում, շինություններ կառուցելու հնարավորություն ընձեռնել գործարար մարդկանց, շահագրգռելով դրանց **ներդրումներ** կատարելու կառուցման գործընթացին: Սրանք կարող են ծառայել թե՛ զբոսաշրջիկներին և թե՛ տեղաբնիկներին առավել մոտիկից ծանոթանալու Հայկական կենցաղին, կահկարասուն և այլն:

2. **Տնտեսական քաղաղորդիչ**- Տնտեսական կոմպոնենտն ուղղված է այն հարցի լուծմանը, որը տվյալ տարածքում արդեն իսկ գոյություն ունեցող այգեգործական և գյուղացիական տնտեսությունների զարգացման նպատակով, կարողանա ստեղծել տնտեսապես շահագրգիռ այնպիսի պայմաններ, որպեսզի մարդիկ կամովի, շահերից ելնելով սկսեն վերականգնել ու վերակառուցել, բերելով գեղեցկավայել տեսքի իրենց իսկ պատկանող տարածքներն ու կառույցներն այնպես, որ կարողանա համահունչ լինի տարածքի ընդհանուր կոնցեպտին: Դրանով իսկ նպաստել թե՛ քաղաքի մերձակայքի կանաչապատմանը և թե՛ զբոսաշրջության զարգացմանը: Այսպիսով կարելի է լուծել երկու կարևոր հարց.

-ապօրինի զավթած տարածքները օրինականացնել, դնել որոշակի պայմաններ դրանց տիրակալների առջև, որպեսզի նրանք տեսքի բերեն իրենց տարածքները համաձայն ընդհանուր կոնցեպտի,

-ստեղծելով գրավիչ տարածք, կապահովվի քաղաքի բնակչության հոսքը դեպի Դալմայի այգիներ, իրենց հանգիստը անցկացնելու քաղաքից ոչ հեռու, սակայն բուսաշատ և հաճելի պուրակներում, որոնք էլ իրենց հերթին կհանդիսանան տվյալ գյուղացիական տնտեսությունների սեզոնային մթերքների, ուտեստի (ընտանեկան խոհանոցի), ինչպես նաև արհեստակցական իրերի պոտենցիալ գնորդ:

3. **Սոցիալական քաղաղորդիչ**- Այս կոմպոնենտի հիմքում ընկած է այն մոտեցումը, որ բնակչության տարբեր սոցիալական խավերի ներկայացուցիչները կարող են ունենալ միևնույն հնարավորությունը թե՛ վայելեն Հայոց արքաների **քաղերում** միմյանց հետ հանգստանալու հնարավորությունը և թե՛ իրենց առօրյա ժամանցը անց կացնելու,

առանց կտրվելու իրենց հիմնական բնակավայրից: Մինևույն ժամանակ, տվյալ տեղանքում պատմամշակութային արժեքների վերածնունդը քաղաքի բնակչությանը կհաղորդի ապագայի զարգացման շունչ, ինչը կարևոր գործոն է քաղաքացիական հասարակության ստեղծման գործընթացին:

**4. Բնապահպանական քաղաքիչ-** Հաշվի առնելով, որ խոշոր քաղաքներում մեկ շնչին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների տարածքը կազմում է 15-25 քմ, իսկ Երևան քաղաքի մեկ բնակչին ընկնում էր 9 քմ կանաչ տարածք, դեռևս մինչև մասայական ծառահատումները, իսկ ներկայումս այն կազմում է 5-6 քմ, վկայում է այն մասին, որ Դալմայի այգիներում նախատեսված շուրջ 256 հա կանաչապատ տարածքը կնպաստի քաղաքի աղտոտվածության նվազմանը:

**Վերոհիշյալ նպատակների իրագործման հիմնական խնդիրներն են լինելու.**

- Երևան քաղաքում կանաչ գոտիների վերականգնում:
- Առկա պատմա-մշակութային արժեքների պահպանում:
- Հայաստանի տարածքում պատմականորեն գոյություն ունեցող բուսատեսակների աճեցման մշակութային պահպանում և ցուցադրում:
- Դալմայի այգու տարածքում ազգային պարկի ստեղծում:
- Քաղաքի սանիտարական վիճակի և էսթետիկական տեսքի բարելավում, շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության կարգավորում, տուրիզմի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում:
- Դպրոցականների գյուղատնտեսական էկոլոգիական կրթության համար բնական լաբորատորիայի ստեղծում:

**Այդ նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը**

- Դալմայի այգիների տարածքում ուսումնասիրել, գոտիավորել և սահմանազատել հնագիտական, պատմա-մշակութային և բնապահպանական արժեք ներկայացնող տարածքները,
  - պատմա-մշակութային համալիրի տարածքը ոռոգման ջրով ապահովելու և ջրախնայողական կիրառման համար ոռոգման ցանցի կառուցում,
  - սահմանազատել եղած այգիները, կանոնակարգել տվյալ տարածքում վարձակալական հիմունքներով հողօգտագործումը, այն ծառայեցնելով ծրագրի նպատակին՝ հաշվի առնելով բնակչության շահերը, բարեկարգել դրանց հարող տարածքները,
  - Դալմայի այգիների եզրագծին հարող և Իսակովի փողոցին զուգահեռ, **6-10** մետր լայնությամբ պաշտպանական անտառաշերտի հիմնում,
  - Ստորին Հրազդան ջրանցքի երկայնքով, երկու կողմում, **3-6** մետր լայնությամբ պաշտպանական անտառաշերտի հիմնում,
  - հատուկ հողամասերի հիմնում, որտեղ կաճեցվեն հանրապետության կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակներ,
  - պատմա-մշակութային համալիրի խճապատ ծանապարհային ցանցի հիմնում,
  - Դալմայի այգիների արևելյան մասի, Ստորին Հրազդանի ջրանցքին հարող, ներկայումս չօգտագործվող **6-8** հա-ի վրա ստեղծել «էթնիկ պարկ», որտեղ կանաչ գոտու մի մասը կկազմի պտղատու ծառատեսակների վայրի ցեղակիցների այգիները,
  - պատմա-մշակութային համալիրի ստեղծման աշխատանքներին բնակչության տարբեր խմբերի, երիտասարդության, ուսումնական հաստատությունների, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներգրավման ապահովում,
  - պատմա-մշակութային համալիրի կանաչ գոտու խնամքի և պահպանության ապահովում:
- «էթնո պարկի» ստեղծման նպատակը հետևյալ հիմնական գործառույթների իրականացումն է՝
- բնապահպանական տեսանկյունից ժամանակակից տեխնոլոգիաների ցուցադրում, դրանց ուսուցանում և իրազեկում,
  - պատմական և էթնոմշակութային ցուցահանդեսների կազմակերպում,

- տեղեկատվական կենտրոնի ստեղծում:

... «Ակնկալվող արդյունքները»

ա. Երևան քաղաքում կավելանան բարեկարգված կանաչապատ տարածքները 256 հեկտարով,

բ. պայմաններ կստեղծվեն Դալմայի այգիների և նրանց ներառված հնագույն կառույցների պահպանման համար,

գ. կբարելավվի Երևան քաղաքի էկոլոգիական վիճակը և նպաստավոր պայմաններ կստեղծվի բնակչության առողջության պահպանման, տուրիզմի զարգացման ուղղությամբ,

դ. էթնո պարկի ձևավորումը հնարավորություն կտա Հայկական ավանդույթների վերականգնմանը և հասարակական կենցաղի բարելավմանը, ինչպես նաև արտերկրյա և տեղական ներդրողների շահագրգռման համար,

ե. հնարավորինս կնավազեցվի փոշեքամիների ներթափանցման, էռոզիոն երևույթների և այլ վնասակար գործոնների զարգացման պայմանները,

զ. մայրաքաղաքի տարածքում կստեղծվեն բարելավված սանհիտարական վիճակում գտնվող ռեկրեացիոն գոտիներ,

է. ծրագրի իրականացման ժամանակահատվածում կստեղծվի շուրջ 300 լրացուցիչ և պատմա-մշակութային համալիրի ամբողջական գործելուց հետո բնակչության համար՝ 150-200 մշտական աշխատատեղ»:

Պարզ երևում է, որ Դալմայի այգիներից հետք անգամ չի մնալու: Այսպես կոչված «պահպանվելիք» 256 հեկտար տարածքում իբր հիմնվելու են՝ անտառ, ազգային պարկ, գյուղացիական տնտեսություններ, իբրև թե այդտեղ վերականգնվելու են հին այգիները, արտադրվելու է գյուղատնտեսական-այգեգործական մթերք, իրականացվելու են պատմաազգագրական տոնակատարություններ, ցուցահանդեսներ՝ այն էլ շարունակաբար: Այդ տարածքը իբրև թե վերածվելու է նաև հանգստավայրի, զբոսաշրջության հանգրվանի, այդտեղ կառուցվելու են ճանապարհներ, շինություններ...

Ծրագրի հեղինակները կարող էին նույն տարածքում միմյանց բացարձակորեն հակասող ևս բազում գործողություններ ներկայացնել, քանզի նրանք շատ լավ գիտեն, որ դրանք գրված են ձևի համար: Ինչպես արդեն ասվել է, նշված 256 հեկտարը մոտակա տարիներին նույնպես աճուրդի է հանվելու, կառուցապատվելու...

Իլֆ-պետրոլյան ոճով գրված Ծրագրի զավեշտական շարադրանքին լրջորեն պատասխանելը, կարծում ենք, անիմաստ է, սակայն անհրաժեշտ ենք համարում «Ակնկալվող արդյունքներ»- ին պատասխանել կետ առ կետ:

ա) Ոչ թե Երևան քաղաքում կավելանան բարեկարգված կանաչապատ տարածքները 256 հեկտարով, այլ հակառակը՝ Երևանում կանաչապատ տարածքները կնվազեն մոտ 500, իսկ չհայտարարված ծրագրով՝ մոտ 700 հեկտարով:

բ) Ինչպես արդեն ասվել է, Դալմայի այգիներից պահպանվելու է միայն նրա անվանումը:

գ) Ամբողջովին սուտ ու կեղծիք է նաև այն, թե իբր կբարելավվի Երևան քաղաքի էկոլոգիական վիճակը և նպաստավոր պայմաններ կստեղծվի բնակչության առողջության պահպանման համար, իսկ այն, որ իբր նպաստավոր պայմաններ կստեղծվի տուրիզմի զարգացման ուղղությամբ, հավանաբար, այստեղ խոսքը վերաբերում է աղտոտված օդի և համատարած բետոնի և ասֆալտի սիրահարներին:

դ) Ներդրումների հարցում, կարծում ենք, Ծրագրի հեղինակները չեն սխալվում: Միշտ էլ կգտնվեն մարդիկ, ովքեր չնչին գումարներով տեր կդառնան ազգային ունեցվածքին:

ե-զ) Միայն անպատասխանատու անձինք կարող են ասել, որ կանաչ տարածքի ոչնչացումը կարող է նվազեցնել փոշեքամիների ներթափանցման, էռոզիոն երևույթների և այլ վնասակար գործոնների զարգացման պայմանները...

է) Առաջարկվող 300 ժամանակավոր և 150-200 մշտական աշխատատեղերի փոխարեն այժմ Դալմայի այգիներում կա 1800 վարձակալ, այսինքն այդքան մշտական աշխատատեղ: Եթե հաշվի առնենք, որ շատ դեպքերում, յուրաքանչյուր վարձակալած հողամասում աշխատում են երկու և ավելի մարդ, հետևաբար ստացվում է, որ Դալմայի այգիներում այժմ մշտական աշխատանք ունեն մի քանի հազար մարդ:

Քննարկվող Ծրագրին վերաբերող շատ հարցեր իրենց պատասխանը կստանան ստորև ներկայացվող գրությունից: ՀՀ բնապահպանության նախարար Վ. Այվազյանը (21.07.04թ. N 1-04/1115) ՀՀ գյուղատնտեսության նախարար Դ. Լոքյանին գրում է. «Ի պատասխան Ձեր 21.06.2004թ. N 07-ՍԱ, 02-1455 գրության, հայտնում եմ հետևյալը.

1. Ըստ ներկայացված ծրագրի նախագծի, «Դալմայի այգիներ» պատմամշակութային համալիրը նախատեսվում է ստեղծել ՀՀ կառավարության 27.03.03թ. N 1941- Ա որոշմամբ հաստատված 256 հա անտառապատման համար նախատեսված հողատարածքներում, այն դեպքում, երբ պատմական ժամանակներում հիմնված և մինչև օրս պահպանված Դալմայի այգիներ համալիրի տարածքը կազմում է մոտ 533 հա: Առավել ևս, որ վերը նշված որոշման 3-րդ կետի հանձնարարականը վերաբերվում է Դալմայի այգիներում անտառի հիմնման ու պահպանման միջոցառումներին և ոչ թե Դալմայի այգիների համալիրին, ծրագրի վերնագիրը անհրաժեշտ է համապատասխանեցնել նշված պահանջներին:

2. Դալմայի այգիների 256 հա կազմող ընդհանուր տարածքի մեծ մասը – 200 հա / տես «Նախատեսվող միջոցառումների մոտավոր ժամանակացույց» բաժնում էջ 9-10 և սխեման/ պետք է զբաղեցվի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերով, ինչը սկզբունքորեն հակասում է վերը նշված որոշման 1-ին կետին, որով սահմանվում է առկա գյուղատնտեսական նշանակության հողերի տեղափոխումը անտառային հողերի կատեգորիա: Համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի և ՀՀ Անտառային օրենսգրքի 6-րդ հոդվածի համապատասխան նշանակություն ունեցող հողերի /տվյալ դեպքում անտառային կատեգորիայի հողերի/ այլ նպատակով օգտագործումը /տվյալ դեպքում գյուղատնտեսական նպատակներով/ պետք է կատարվի ՀՀ կառավարության կողմից տվյալ տարածքի նպատակային նշանակության փոփոխությունից հետո:

3. Միաժամանակ պետք է բացառվեն նշված տարածքում որևէ կառուցապատման աշխատանքների իրականացում, մասնավորապես, պարզ չէ և մտահոգիչ է «... համալիրի համապատասխան տարածքներում /ո՞ր/ շինություն կառուցելու հնարավորություն ընձեռնել գործարար մարդկանց, շահագրգռելով նրանց ներդրումներ կատարելու կառուցման գործընթացում /էջ 7/» արտահայտությունը:

4. Պետք է պարզաբանվեն նաև փաստաթղթում օգտագործվող հասկացությունները. ծրագրով նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը օրենսդրորեն հակասական է անտառների հիմնման հասկացության հետ, քանզի անտառների հիմնումը, ստեղծվող անտառային էկոհամակարգերի իրավական ռեժիմը, պահպանության և պաշտպանության միջոցառումները հիմնովին տարբերվում են կանաչապատված տարածքների ստեղծման, օգտագործման և խնամքի, զբոսայգիների հիմնման մոտեցումներից:

Այդ իսկ պատճառով, կրկին անգամ պնդում եմ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված այն առաջարկությունը, որ ՀՀ կառավարության 27.03.03թ. N 1941- Ա որոշման 3-րդ կետով նախատեսված անտառների հիմնման համար նպատակահարմար է օգտագործել տեղաբնակ ծառատեսակները՝ հատկապես Հայաստանում լայն տարածում ունեցող և մեծ արժեք ներկայացնող մշակովի բույսերի վայրի ցեղակիցները: Ծրագրի սխեմայով նախատեսված է ստեղծել ոչ մեծ մակերեսով պտղատու տեսակների վայրի ցեղակիցների պուրակ, սակայն ոչինչ չի ասվում հիմնվող անտառների ծառատեսակների տեսականու վերաբերյալ:

5. Ծրագրի նախագիծը իր մեջ պարունակում է նաև բազմաթիվ չհիմնավորված առաջարկություններ: Օրինակ, «Նպատակների իրագործման հիմնական խնդիրների» շարքում / էջ 8/ նշվում է /կետ 4/ Դալմայի այգու տարածքում ազգային պարկի ստեղծում:

Նշված առաջարկությունը հստակ հիմնավորման կարիք ունի, քանի որ ազգային պարկի ստեղծումը կատարվում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատուկ ընթացակարգով, ինչը չի ամրագրված ծրագրի նպատակներով, խնդիրներով և նախատեսվող միջոցառումների ժամանակացույցով:

6. Պարզաբանման կարիք ունի էջ 6-ում նշված արտահայտությունը. «Բարելավել եղած խաղողի և այլ պտղատուների աճի և զարգացման պայմանները, դրանց շուրջ կառուցելով «ԿՈՍԵՐՑԻՈՆ ԿՈՆՑԵՊՏ», զբոսաշրջիկներին ներգրավելու նպատակով»:

7. Պարզաբանման կարիք ունի, թե ինչպես է իրականացվելու ջրահեռացումը, քանի որ նշված տարածքով չի անցնում կոյուղի:

8. «Կոնցեպցիայի նպատակներն ու ակնկալիքները» բաժնում կոնկրետ չեն շարադրված ոչ նպատակները, ոչ էլ ակնկալիքները: Դրանք հիմնավորման և հստակեցման կարիք ունեն:

9. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ սույն ծրագիրը պարտադիր ենթակա է բնապահպանական պետական փորձաքննության: Հաշվի առնելով հարցի կարևորությունն ու Դալմայի այգիների հետ կապված երկար տարիներ քննարկվող հիմնախնդիրները, ինչպես նաև ՀՀ կառավարության 27.03.03թ. N 1941-Ա որոշման 3-րդ կետի պահանջը, ծրագիրն անհրաժեշտ է դարձնել հասարակական լայն քննարկումների առարկա:

Ելնելով վերը շարադրվածից նպատակահարմար է հիմնովին լրամշակել ներկայացված ծրագիրը՝ նրա հիմքում դնելով ՀՀ կառավարության 27.03.03թ. N 1941-Ա որոշմամբ հաստատված պահանջները և իսպառ բացառելով 256 հա տարածքի օգտագործումը կառուցապատման և այլ նպատակների համար:

Հաշվի առնելով ծրագրում բնապահպանական բաղադրիչի ուժեղացման և պրոֆեսիոնալ մակարդակով ներկայացման անհրաժեշտությունը ՀՀ բնապահպանության նախարարությունը առաջարկում է իր աջակցությունը ծրագրի նախագծի լրամշակման գործընթացում»:

Բնապահպանության գերատեսչությունը, փաստորեն, չի ընդունում Դալմայի այգիների «գոտևորման» սկզբունքը և հիմնովին, սակայն զուսպ ու հակիրճ մերժում է գյուղատնտեսության նախարարության ներկայացրած ծրագիրը:

Դժվար չէ կռահել, թե այդ փաստաթուղթը գրելիս ինչ արտահայտություններ են սղվել...

Ծրագրում օգտագործված են հայոց լեզվին օտար ու անհարիր բառեր, եզրեր: Նաև պարզ չէ, թե ինչո՞ւ Հայոց արքաների այգիները ներկայացվում են որպես «Հայոց Արքաների բաղեր»: Հայոց այդ ո՞ր արքան է, որ «այգուն» «բաղ» է անվանել:

Ծրագրի նպատակներից մեկն էլ կարծես թե այն է, որ հերթական անգամ շրջանառության մեջ դրվեն Հայաստանը հայ ժողովրդից օտարելու դավադիր տեսակետները («Ըստ Յա. Ի. Գումելի խաղողի մշակությունը Հայաստանում հայտնի էր դեռևս 700-800 տարի մեր թվարկությունից առաջ և խաղողի որոշ տեսակներ՝ ոսկեհատ, մսխալի, արարատին (խաչաբաշ), նագելին (քիշմիշ), ինչպես նաև սև խաղողի մի քանի տեսակները- ուրարտացիներն են ստեղծել»): Հավանաբար, դա արվում է նաև այն ենթատեքստով, որ Դալմայի այգիներն իբր հայ ժողովրդի մշակութային ժառանգությունն չեն, ուստի և այգիների կառուցապատմամբ՝ ոչնչացմամբ հայ ազգային մշակույթը կորուստ չի ունենալու:

Ջարմանք է հարուցում՝ հանդուզն ոճով, խոսքի այդ մակարդակով և, ընդհանրապես, գիտականորեն չհիմնավորված ծրագիր ներկայացնելը պետական

ամենաբարձր ատյանների անունից և, թե ինչպես են այդ ատյանները հանդուրժել այդպիսի զավեշտական ու անբարեխիղճ գործելակերպը:

Դալմայի այգիներում անտառ հիմնելու ծրագիրը շրջանառության մեջ է դրվում, հավանաբար, այն նպատակով, որպեսզի այգու հողատարածքը վաճառելու՝ ոչնչացնելու գործընթացն անաղմուկ իրականացվի: Այդ ծրագիրը անտեղյակներին ոգևորում է (թե տեսեք նոր անտառտարածք ենք ունենալու), անձնապես հարստացնելու է պետական որոշ պաշտոնյաների, իսկ նրանց, ովքեր գիտեն, որ այն սովորական խաբկանք է՝ ցավ ու կսկիծ է պատճառում:

Նախ պետք է հիմնավորվի ծաղկուն այգին անտառ դարձնելու ծրագիրը, և ամենագլխավորը՝ այդտեղ անտառ չի լինելու: Ուրիշ հարց է, որ անտառ հիմնելու պատրվակով ՀՀ շահագրգիռ իշխանավորները մեր պարտքերը մեծացնելու նոր վարկեր կամ մեր արժանապատվությունը տրորող դրամաշնորհներ կվերցնեն, կկազմակերպվի ծառատունկ, բնակչությանը ոգևորող տեղեկություններ կսփռվի, իսկ մեկ տարի անց այդ տարածքում, հավանաբար, կլինեն չորացած տնկիներ, և չի բացառվում, որ այդտեղ նույնպես սկսվեն այն հրդեհները, որին մենք ականատես ենք քաղաքամերձ անտառտարածքների կառուցապատման գործընթացում:

Այժմ Դալմայի այգիներում ծառերի ու թփերի վերարտադրությունը համեմատաբար կառավարելի է: Դալմայի այգիները որպես կանաչ տարածք ունենալու խնդրում ամենաիրատեսականը այն քաղաքապետարանի հաշվեկշռից հանելու և հողերը վարձակալությամբ հանձնելու կարգավիճակի պահպանումն է: Վարձակալները ջանասիրաբար մշակում են հողը, նոր ծառեր ու թփեր տնկում, հոգատարորեն խնամում ու պահպանում դրանք, ինչը շահեկան է թե վարձակալների, և թե Երևան քաղաքի բնակիչների համար:

Դալմայի այգիներում անտառ հիմնելու սին խոստումները բացահայտվում են նաև նրանով, որ քաղաքապետարանին հանձնված անտառները անխղճորեն ավերվում և դրվում են կառուցապատման տակ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Դալմայի այգիների «գոտնորման»՝ հողերի կարգավիճակի փոփոխության և դրանք քաղաքաշինական նպատակով օգտագործելու ծրագիրը պետական և անկախ փորձաքննության չի ենթարկվել: Չնայած այն բանին, որ «գոտնորման» ծրագիրը քաղաքաշինական խոշոր խնդիր է, սակայն դրան վերաբերող՝ ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի որոշումներն անհատական բնույթի են: Ճիշտ է, այդ կարգի որոշումներն իրավաբանական փաստաթղթի ուժ չունեն, այդուհանդերձ գործընթացը սկսված է՝ հողերն արդեն աճուրդի են հանված: Անգամ հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ աճուրդի հանված հողամասերը երկար տարիներ է, ինչ մշակում են պետության հետ պայմանագիր կնքած վարձակալները:

Դալմայի այգիների կարգավիճակի փոփոխման-կառուցապատման խնդիրը ոչ միայն հասարակությունից է գաղտնի պահվում, այլև այդ խնդրով անգամ գերատեսչական քննարկումներ չեն կազմակերպվում: Հասկանալի է, միայն այդպիսի գործելակերպով է, որ առանձին անհատների հնարավորություն է ընձեռվում՝ իր նպատակին համապատասխան տնօրինելու-փոշիացնելու ազգային հարստությունները:

Նախ, պետք է ասվի, որ խիղճ ու բանականություն ունեցող, առավել ևս հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ պաշտոնյաները Դալմայի այգիների բնաջնջումը դժվար թե քննարկման առարկա դարձնեին: Ընդհանուր առմամբ, Դալմայի այգիների «գոտնորման», իմա՝ ոչնչացման ծրագիրը կարելի է համարել տգիտության, դավադրության, ապազգայնության միահյուսվածք, ինչպես նաև բացահայտ ու անսքող անձնական շահամոլության արդյունք:

Դալմայի այգիների «գոտևորման» ծրագիրը և այդ տարածքից կատարված հողատկացման որոշումները, ինչպես նաև բնակչության՝ վարձակալների հանդեպ անխիղճ ու անմարդկային (ինչը մարդկանց նկատմամբ բարոյական ու հոգեբանական կտտանք է) գործելակերպը հակասում են ՀՀ Սահմանադրությանը, հողային և քաղաքացիական օրենսգրքերին, քաղաքաշինության, շրջակա միջավայրի վրա ազդեցության էկոլոգիական փորձաքննության, իրավական ակտերի մասին օրենքներին, բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմնադրույթներին և ՀՀ կողմից վավերացված միջազգային մի շարք կոնվենցիաներին:

Ժողովրդի ու պետության շահերը ոտնահարելով՝ անհեռատես և ապագային պաշտոնյաների ձեռքով արդեն «գոտևորվել»-օտարվել է հայոց պետական կառավարման համակարգը, հեռախոսա-հաղորդակցության կապը, Ջվարթնոց օդանավակայանը, Սևան-Հրազդան հիդրոէներգահանգույցը և ընդհանրապես՝ ամբողջ էներգահամակարգը, «գոտևորման»-վաճառքի գործընթացում է խմելու և ոռոգման ջուրը, «գոտևորվում» են հողատարածքները, շուտով, հավանաբար՝ ճանապարհները, ի վերջո՝ Հայաստանի Հանրապետությունը:

Պատկերը շրջվել է: Ստեղծվել է զավեշտալի, սակայն ողբերգական իրավիճակ: Երբ իշխանավորները կոպտորեն խախտում են օրենքը, իսկ բնակչությունը փորձում է այն վերականգնել: Բայց ինչպե՞ս...

Մարդու իրավունքների և արժանապատվության ոտնահարման մղձավանջից դուրս գալու գլխավոր պայմանն է՝ հայ մարդը պետք է տեր կանգնի իր ունեցվածքին, թե պատմական ու մշակութային, և թե մյուս բնագավառներում, քանզի պետական բարձրաստիճան պաշտոնյաների վարած քաղաքականությունը հակոտնյա է հայ ժողովրդի և հայոց պետականության շահերին:

Հակոբ Արբակի Սանասարյան

Հայաստանի կանաչների միության նախագահ

26-ը հուլիսի 2004թ.